Azg
Azg armenian daily
13 ՕԳՈՍՏՈՍ 1997. ՇՈՐԵՔՇԱԲԹԻ #151 (1406)

Մոհամեդ Խաթեմին խորհրդարանին ներկայացրեց իր կառավարության կազմը

12 ՕԳՈՍՏՈՍ. RFI: Իրանի նոր նախագահ Մոհամեդ Խաթեմին Իրանի խորհրդարանին վավերացման համար այսօր ներկայացրեց իր կառավարության անդամների ցուցակը: Նոր կաբինետի կազմում ընդգրկվել է 22 նախարար: Արտգործնախարարի պաշտոնին նշանակվել է Քամալ Խարազին, որը 1990 թվականից Իրանի դեսպանն էր ՄԱԿ-ում, նախկին կառավարությունում էներգետիկայի նախարարի պաշտոնը զբաղեցրած Բիյան Զանգանեհը դարձավ նավթավերամշակման արդյունաբերության նախարար: Դա Իրանի կառավարությունում կարեւորագույն պաշտոն է, քանի որ Իրանը, ինչպես հայտնի է, աշխարհում երկրորդ տեղն է զբաղեցնում նավթի արտահանման բնագավառում: Իրանի խորհրդարանում նոր կաբինետի կազմը կվավերացվի օգոստոսի 19-ին:

ԴԱՐԱԲԱԳԻ ՀԱՐԾ

ԱՄՆ-ը սեպտեմբերին սկսելու է վճռորոշ բանակցություններ

Ալիեւը կրկին խոսում է փուլերի մասին

12 ՕԳՈՍՏՈՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Երկուշաբթի օրը Ֆրանսիայում գործակալության մի հաղորդագրությունից պարզ դարձավ, որ սեպտեմբերին ԱՄՆ-ը նոր բանակցություններ է սկսելու Հայաստանի, Ադրբեջանի ու Ղարաբաղի ղեկավարների հետ, ընդ որում, ամերիկյան պաշտոնյան ասաց, թե այդ բանակցությունները վճռորոշ կլինեն: ԱՄՆ-ի պետդեպարտամենտի պաշտոնյան նշեց, որ բանակցությունները կսկսվեն նախագահական ընտրությունների ավարտից հետո: Ղարաբաղի նախագահական ընտրությունները տեղի կունենան սեպտեմբերի 2-ին: Ակնկալվում է, որ նախագահ կընտրվի ղարաբաղյան գործընթացի փորձառու դիվանագետներից մեկը՝ Արկադի Ղուկասյանը: Թեեւ եռանախագահությունը կարծիք չի հայտնել նախագահական թեկնածուների մասին, սակայն դիվանագետներին հաջ հայտնի Արկադի Ղուկասյանը դրականորեն կընդունվի թե՛ եռանախագահության, եւ թե՛ ընդհանրապես Մինսկի խմբի կողմից: ԱՄՆ-ի պետդեպարտամենտի պաշտոնյայի այն հայտարարությունը, թե եռանախագահները չափազանց լուրջ բանակցություններ պետք է սկսեն Ղարաբաղի նախագահի ընտրություններից հետո՝ նշանակում է, որ այդ բանակցությունների ակտիվ մասնակիցը պետք է դառնա նաեւ Լեռնային Ղարաբաղի նորընտիր նախագահը: Սեպտեմբերին տարածաշրջան կժամանի ԱՄՆ-ի բանագնաց Լին Պասքոն: ԱՄՆ-ի պետդեպարտամենտի պաշտոնյան հայտնեց, որ այս ամսվա վերջին Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը նույնպես կենտրոնի դարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնահարցերը, երբ կհանդիպի Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ:

Երկուշաբթի օրը նախագահ Ալիեւը վերադարձավ Բաքու եւ կրկին խոսեց հակամարտության կարգավորման փուլերի մասին: Առաջին փուլում, ըստ Ալիեւի, հայկական ուժերը պետք է դուրս բերվեն գրավված 6 ադրբեջանական շրջաններից եւ այդ շրջաններում պետք է տեղակայվեն ԵԱՀԿ-ի խաղաղապահ ուժերը: Հաջորդ փուլում պետք է վերականգնվեն տնտեսական կապերը Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ եւ վերաբացվեն տրանսպորտային բոլոր ծածանարահները, ինչպես նաեւ նավթի ու գազի խողովակաշարերը: Երկու հանրապետությունները կարող ճանապարհները պետք է գործեն միջազգային խաղաղապահ ուժերի վերահսկողության ներքո: Ֆրանսիան հայտնեց, որ առաջին փուլից հետո, երբ դարաբաղյան ուժերը կհեռանան Ղարաբաղի սահմանները, Ադրբեջանն ուղղակի բանակցություններ կսկսի Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հետ: Հեյդար Ալիեւը պնդում է, որ դրա դիմաց Ղարաբաղի իշխանությունները պետք է առհիմնապես վերադարձնեն Լաչինի ու Շուշիի շրջանները:

Ալիեւը Թուրքիային մեղադրում է անբավարար աջակցության համար

ՍՏԱՄԲՈՒԼ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը Թուրքիային մեղադրել է իր երկրին ոչ բավարար ֆինանսական օգնություն ցուցաբերելու համար: Հաղորդելով այս մասին, «Մարմարա» օրաթերթը նշում է, թե Ալիեւի տարակուսանքն է առաջացրել այն հանգամանքը, որ Թուրքիայի Էքսիմ բանկը Ադրբեջանից դատանջել է վճարել նախկին իշխանությունների կողմից վերցված 70 մլն դոլարի փոխառության տոկոսները: Ադրբեջանի նախագահը հիշեցրել է, որ Անկարան մերժել է 117 մլն դոլարի օգնության խնդրանքը եւ ավելացրել, որ թուրքական ընկերություններն անհամեմատ շատ ներդրումներ են կատարում Կենտրոնական Ասիայում, քան Ադրբեջանում: Ալիեւը Թուրքիային առաջարկել է նաեւ չընդլայնել առեւտրային կապերը Հայաստանի հետ:

Սենատոր Մըքֆեյրնը Թուրքիայից հետո այցելելու է կովկասյան հանրապետություններ

ՍՏԱՄԲՈՒԼ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ստամբուլի «Մարմարա», վկայակոչելով թուրքական թերթերի հաղորդումները, գրում է, որ Անկարա է ժամանել ամերիկացի սենատոր, հանձնաժողովներից մեկի նախագահ Մաք-Քեյրնը, որն այս օրերին այցելելու է նաեւ կովկասյան երկրներ: Սենատորը Թուրքիայում կայացած հանդիպումներում իր մտահոգություններն է հայտնել կրոնական մոլեռանդների կողմից կազմակերպվող շարժումների եւ ցույցերի առթիվ: Նա ասել է, որ ԱՄՆ-ի եւ Թուրքիայի փոխհարաբերություններում «բազմաթիվ խնդիրներ կան», որոնցից ամենակարեւորները մարդու ազատությունների եւ ժողովրդավարության վերաբերող հարցերն են: Նա լրագրողներին հաղորդել է նաեւ, որ ԱՄՆ-ը «մեծ կարեւորություն է տալիս կովկասյան հանրապետություններին»: Նա նշել է, որ «իր երկիրը հավատում է, որ Բաքու–Ջեյհան նավթատարի ծրագիրն իրականանալի է»:

Տաջիկստան. Ռուսաստանն այլեւս չեզոք չէ՞

12 ՕԳՈՍՏՈՍ, BBC: Տաջիկստանից ստացված հաղորդագրությունների համաձայն՝ օդային ռմբակոծության են ենթարկվել զինված խմբավորումներից մեկի Մահմուդ Խուդոյբերդիեւի զինյալները: Խուդոյբերդիեւի խոսքերով, ռազմական օդանավերը ռմբակոծել են իր հենակետերից մեկը, որը Դուշանբեից շուրջ 100 կմ հարավ է գտնվում: Ավելի ուշ, մոտակայքում գտնվող Կուրգան Տյուբե քաղաքից հաղորդագրություն ստացվեց, որ օդային հարվածներ են հասցվել Խուդոյբերդիեւի շտաբին: Եթե այս տեղեկությունները հաստատվեն, կնշանակի, որ տաջիկական հակամարտությունում առաջին անգամ օգուտ է կիրառվել, ընդ որում, ինչպես նշում է Դուշանբեում գտնվող BBC-ի թղթակիցը, քանի որ Տաջիկստանի կառավարական ուժերը չունեն ռազմական օգուտ, ապա ենթադրվում է, որ օդային հարվածներն իրագործել են ռուսաստանյան ինքնաթիռներ: Դրանով իսկ Ռուսաստանը Տաջիկստանում հրաժարվել է իր չեզոքությունից:

ՇՐՋԱՆ

Իրանը դեմ է «զինված խաղաղարար ուժերի ներխուժմանը»

Եվ շահագրգռված է Հայաստանի անկախության ամրապնդմամբ

ԵՐԵՎԱՆ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի դեմոկրատական կուսակցության (ՀԴԿ) նախագահ Արամ Սարգսյանը 10-օրյա պաշտոնական այցով գտնվում էր Իրանի Իսլամական Հանրապետությունում (ԻԻՀ), որտեղ հանդիպումներ է ունեցել երկրի արտաքին գործերի եւ էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչների հետ: Ինչպես օգոստոսի 12-ին լրագրողներին հայտնեց Ա. Սարգսյանը, այցելության նպատակն էր տարածաշրջանում կատարվող իրադարձությունների շուրջ դիրքորոշումների ճշտումը: Նա տեղեկացրեց, որ քննարկվել են հայ-իրանական հարաբերություններին, Ղարաբաղի հիմնահարցին: Իրան-Հայաստան-Ռուսաստան հնարավոր միավորմանը եւ տնտեսական համագործակցությանը վերաբերող հարցեր:

Ըստ Ա. Սարգսյանի, իրանական կողմն իր դիրքորոշումը հասակ ներկայացրել է 3 հարցերի շուրջ.

– Իրանը շահագրգռված է Հայաստանի անկախության ամրապնդմամբ, որպեսզի նա չլինի կախյալ այնպիսի երկրից կամ միջազգային կազմակերպությունից, որը շահագրգռված չէ տարածաշրջանի զարգացմամբ:

– Իրանը միանշանակ դեմ է Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման ընթացքում «զինված խաղաղարար ուժերի ներխուժմանը տարածաշրջան»: Իրանը գտնում է, որ խաղաղարար ուժերի ներխուժումը միայն կաղակայունացնի վիճակը:

– Հայաստանը Իրանի համար կարող է պատուհան լինել դեպի Եվրոպա, իսկ Իրանը Հայաստանի համար դեպի Ասիա:

Ա. Սարգսյանը նշեց, որ հասկանալի խաղաղարար ուժերի հարցում Դեմոկրատական կուսակցությունը համամիտ է իրանական կողմի տեսակետին:

ՀԴԿ նախագահը կարեւորեց Իրան–Հայաստան–Ռուսաստան քաղաքական միավորման ձեւավորումը, որի անդամ, նրա խոսքերով, կարող են դառնալ նաեւ Չինաստանը եւ Հնդկաստանը: Ա. Սարգսյանը գտնում է, որ միաբեւեռ կառավարումը ձեռնտու չէ. Ա Եռմուտքն այսօր միայն թեւադրում է: «Եթե ուժերը ճնշելու հնարավորություն ունի, ապա նա ոչնչի առաջ չի կանգնում», – ասաց նա եւ ավելացրեց, որ աղագա քաղաքական միավորումը կարող է լինել հակակշիռ Արեւմուտքին: Ըստ Ա. Սարգսյանի, Իրանում գոհունակությամբ չէին ընկալում Ադրբեջանի նախագահի կատարած այցը ԱՄՆ: Նրա խոսքերով, Իրանը չի ուզում, որ իր դեմ անտեսվի տարածաշրջանում:



Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի նախկին վստահելի՝ Ալեքսանդր Կորժակովը ներկայացնում է իր հուշագրական հատորը՝ «Բորիս Ելցին. Արշալույսից մինչեւ վերջալույս»: Օգոստոսի 12-ին իր հեղինակած գիրքը ներկայացնելիս Կորժակովը, որն այժմ Ելցինի ամենակատաղի ընդդիմախոսներից է, պնդեց, որ գրքում Ռուսաստանի նախագահը ներկայացված է առանց դիմակի, իրական: Գիրքը շուտով վաճառքի կդրվի գրախանութներում:

Դիվանագիտական տեղափոխությունների մասին խոսելը վաղաժամ է

ԵՐԵՎԱՆ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արմենպրեսի թղթակցի այն հարցին, թե հավատա՞ է արդյոք ՀՀ նախագահի մամլո խոսնակ Լեւոն Ջուրաբյանի, Ավստրիայում ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանի, ՀՀ նախագահի խորհրդական Լեւոն Բարխուդարյանի համաղաղասխանաբար Ավստրիայում, Գերմանիայում ու Կանադայում ՀՀ դեսպաններ, ինչպես նաեւ Լոս Անջելեսի ՀՀ հյուպատոս Արմեն Բայբուրդյանի ՀՀ ԱԳ նախարարի տեղակալի պաշտոնում նշանակվելու մասին «Երեւան» տեղեկատվական կենտրոնի տարածած հաղորդումը («Ազգը» այն հրապարակել էր երեկ), ՀՀ ԱԳՆ մամուլի բաժնի պետ Արեգ Հովհաննիսյանը պատասխանեց, որ այդ մասին խոսելը վաղաժամ է երկու պատճառով: Նախ առաջին երեքի դեպքում պետք է սպասվի համաղաղասխան երկրի ագրեմանը (պետության համաձայնությունը) եւ երկրորդ պետք է լինի ՀՀ նախագահի դրան հաջորդող հրամանագիրը: Երկուսի մասին էլ ԱԳՆ մամուլի բաժնի պետը տեղեկություններ չուներ: Արմենպրեսի թղթակիցը նույն հարցով դիմեց նաեւ ՀՀ նախագահի մամուլի ծառայություն, որտեղից նույնպես պատասխան ստացավ:

«Քարթլի-2»-ի վթարի հետեւանքով ամբողջ Վրաստանը հոսանքազրկվել է

ԹԲԻԼԻՍԻ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր ժամը 14-ին ամբողջ Վրաստանում անջատվեց էլեկտրաէներգիայի մատակարարումը: Ինչպես Փրայմ նյուսի թղթակցին հաղորդեցին «Սաքէներգո» դեպարտամենտում, պատճառը «Քարթլի–2» 500-կիլովոլտանոց ենթակայանում տեղի ունեցած վթարն էր: Թբիլիսիում կանգ առավ էլեկտրատրանսպորտը, այդ թվում՝ մետրոն, ջրի պոմպամղումը հոսանքազրկման պատճառով դադարեց խմելու ջուր մատակարարել բնակչությանը:

Վթարի պատճառները պարզվում են: Երկրի էներգահամակարգի լրիվ վերականգնման համար կպահանջվի մի քանի օր:

Ականի պայթյունից Դիարբեքիրում 7 թուրք զինվորներ վիրավորվեցին

12 ՕԳՈՍՏՈՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Թուրքիայի անվտանգության ուժերի պատանները հայտնեցին, որ 7 թուրք զինվոր է վիրավորվել, երբ նրանց մեքենան հարավարեւելյան Թուրքիայում անցել է ականի վրայով: «Ազատություն» ռադիոկայանի աղբյուրը տեղեկացնում է, որ մեքենան պայթեցվել է այսօր առավոտյան Դիարբեքիրի Նարիկոյ գյուղի մոտակայքում: Դեռեւս հայտնի չէ, թե ով էր տեղադրել ականը:

«Լրաբեր»-ում նոր ղեկավարություն

ԵՐԵՎԱՆ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍՏ: ՀՀ Ազգային հեռուստատեսության տնօրեն Համլետ Գասպարյանի հրամանով այսօր հեռուստատեսության «Լրաբեր» ծրագրի (հեռուստատեսային լրատվական վերլուծական գործակալության) տնօրենի պաշտոնակատար է նշանակվել լրագրող Հրայր Ջորյանը, որը մինչ այդ աշխատում էր Արմենպրեսի լրատվական գործակալությունում: Փոխտնօրենի եւ հասարակական-քաղաքական հաղորդումների բաժնի վարիչի պաշտոնը կվարի Հակոբ Ռուբինյանը:

ՈՍԿԵՓԱԿ

ԼՂՀ

Թեկնածուների ձեւաթղթերը լրացված են

Համաձայն ԼՂՀ ընտրությունների մասին ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի, օգոստոսի 8-ի դրությամբ ավարտվել է քաղաքացիական նախաձեռնությամբ նախագահի թեկնածու Արկադի Ղուկասյանի առաջադրումը պաշտպանող ձեւաթղթերի լրացումը: Նրա նախընտրական շտաբի ղեկավար, ԼՂՀ փոխվարչապետ Ժիրայր Պողոսյանը, առաջադրումը պաշտպանող ձեւաթղթերը ներկայացրել է հանրապետության 8 վարչատարածքային միավորներից՝ 2418 ստորագրություններով, ԿԸՀ ձեռնամուխ է եղել հավաքված ստորագրությունների ստուգմանը:

ԼՂՀ նախագահի թեկնածու Բորիս Առուբանյանի թեկնածությունը նախնական տվյալներով առայժմ պաշտպանել են 2161 քաղաքացի:

ԼՂՀ նախագահի թեկնածու, ԼՂ ԱԺ նախագահ Արքուր Թովմասյանի աջակցող խմբից ստացված տեղեկությունների համաձայն, ԼՂՀ ԱԺ նախագահի թեկնածությունը, օգոստոսի 9-ի դրությամբ պաշտպանել են 2600 քաղաքացիներ, վարչատարածքային 8 վարչատարածքային միավորներից:

Ըստ միեւնույն աղբյուրների, առայժմ այդ փաստաթղթերը ԿԸՀ չեն ներկայացվել զուտ տեխնիկական պատճառներով: ԼՂՀ ԱԺ նախագահի աջակցող խմբի ներկայացուցիչները հերքել են «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության այն հաղորդագրությունը, թե իբր ԼՂՀ ԱԺ նախագահի ձեւաթղթերի ներկայացումը ԿԸՀ կաղված է որոշ դժվարությունների հետ: Ռադիոկայանի թղթակիցը նույնիսկ չի կարվել աջակցող խմբի հետ տվյալները ստուգելու նպատակով: Հիշեցնենք, որ նախագահի թեկնածությանն անհրաժեշտ է ընդամենը 1500 ստորագրություն: ԼՂՀ առնվազն 4 վարչատարածքային միավորներից: Ձեւաթղթերի հանձնման վերջին ժամկետը օգոստոսի 19-22-ն է:

«Մեկ ազգ-մեկ Հայրենիք-մեկ նպատակ»

«Այսօր, արցախահայության շուրջ տասնամյա ազատագրական պայքարի բերեւս ամենապատասխանատու փուլում, ավելի քան երբեւէ կարեւորվում է հայ ժողովրդի բոլոր առողջ ուժերի, միգուցե առաջին հերթին երիտասարդական կազմակերպությունների, համախմբման եւ միասնության սուրբ գաղափարը, քանի որ այդ գաղափարի կենսունակությունից է մեծապես կախված մեր ժողովրդի ապագան ու դարավոր իղձերի իրականացումը», ասաց ԼՂՀ ԱԺ նախագահ Արքուր Թովմասյանը, օգոստոսի 12-ին ելույթ ունենալով Ստեփանակերտում կայացած ՀՅԴ համահայկական 5-րդ երիտասարդական բանակումի մասնակիցների առջեւ: Նրա խոսքերով, Արցախը իր նպատակներին կհասնի միայն համայն հայության միասնության պայմանով: ԼՂՀ, ՀՀ եւ Սփյուռքի հերոսական ջանքերի շնորհիվ ԼՂ-ի դե ֆակտո կայացած հանրապետությունը ասվածի պերճախոս ապացույցն է:

Սակայն, չնայած ԼՂՀ պետականության կայացման իրավական անքերիությանը, հակամարտության վերջնական կարգավորումը, ԱԺ խոսնակի կարծիքով, դյուրին չէ: Խելամիտ փաստարկներ չգտնելով, դարաբաղյան կողմի մոտեցումների դեմ պատերազմական բախումն օգտագործում է նավթարդյունաբերական դիվանագիտության լծակները, օգտվելով մի շարք նավթարդյունաբերական ընկերությունների լոբբիստական աջակցությունից: «Նման պայմաններում, մեզ ոչինչ չի մնում, քան ապավինել սեփական ուժերին, ամրապնդել ԼՂՀ պետականությունը, մեր երազանքների իրականացմանը հասնելու հիմնական գրավականը «մեկ ազգ-մեկ Հայրենիք-մեկ նպատակ» սկզբունքի կենսունակության ապահովումն է, սկզբունք, որով, լիահույս եմ, կղեկավարվեն միասին», վերջում ասաց Արքուր Թովմասյանը:

ՎԱՀԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՈԵՊԼԻԿ

Ինչ անել, երբ մանկական զբոսայգին վրդովում է կառավարական ամառանոցների հանգիստը

Մանկական երկաթուղին երեխաների ժամանցի սիրված վայրերից է: Զբոսայգու տնօրենությունը հաջողությամբ օգտագործում է տեղը եւ պահը՝ օգտակարը համատեղելով հաճելիի հետ (խոսքը մանուկների ժամանցի մասին է): Զբոսայգին հատկապես աբխազ է հանգստյան օրերին, երբ մինչեւ երեկո երեխաներին այստեղ հրադարում էստրադային համույթների, երգիծանքի ժանրի արտիստների, երիտասարդ երգիչների ելույթները: Այգին միշտ բազմամարդ է. «չի նեղվում» այցելուների դակասից, մանավանդ, տնօրենությունը գնահատում եւ օգտագործում է լավ գովազդի գործոնը: Թվում է՝ ամեն ինչ հիանալի է: Գոհ են երեխաները, ծնողները, գոհ են կազմակերպիչները, արդյունքում իր կոչչն ինքնուրույն նահանջում է ամառային տաքը:

Սակայն, ինչպես ասում են, չկա վարդ առանց փշի: Մանկական զբոսայգու մերձակայքում «վերեում», տեղավորված են կառավարական ամառանոցները, որի բնակիչներն, ըստ ամենայնի, չեն դիմանում աղմուկին: Համենայն դեպս, այդպես է հավատացնում զբոսայգու մշտական այցելուներից մեկը, որն ապրում է «Մոնումենտի» շրջանում. սակայն, շրջանցելով իր երեխաների ժամանցը Հաղթանակի զբոսայգում կազմակերպելու պատեհությունը, նախընտրում է այդ անել Հրազդանի գեղատեսիլ կիրճում: Կիրակի օրը, նախորդ հանգստյան օրերին այգին «լռեցնելու» նախազգուշական փորձերից հետո ինչ-որ անձիք (մեր զրուցակցի հավաստիացմամբ նախագահի պահակախմբից) «հանում են ըմբոնել, մի՞թե երեխաներդ մեղավոր են, որ այգին տեղավորված է հանրապետության ազդեցիկ պետական այրերի «լսելիության սահմանում» եւ մի՞թե սույն պատճառով սխրված են հեռանալ «անբույրատելի» գոտուց:



Հասկանալով, որ բոլոր մարդիկ, այդ թվում նաեւ իշխանության վերին էշելոնների ներկայացուցիչները եւ նրանց ընտանիքները հանգստանալու սահմանադրական իրավունք ունեն, այնուամենայնիվ, մեր կողմից կուզենայինք հարցնել զբոսայգին անաղմուկ-կիսակենդան տարածքի վերածելու վերոհիշյալ գործողությունը պետական այրերի կամքով եւ գիտությա՞մբ է արվում, թե՞ որպես կանոն «ալիքներ խառնող» այլ օղակների ինքնագործունեության արդյունքն է, որ «իշխանների» հովանու ներքո բարական անգամ ինքնահաստատվում են մարդկանց «այրը խորելով» սեփական ամենակարողությունը: Հաշվի առնելով, որ կառավարական ամառանոցների բնակիչներն իրենց կիրակի օրյա հանգիստն անցկացնելու պատեհությունն ունեն Հաղթանակի կիրճում մոծակների խայթոցներին դիմագրավելը, ենթադրում ենք, որ երկրորդն ավելի հավանական է. ակնկալում ենք, որ մանկական երկաթուղու ամառային առօրյան կշարունակվի:

ԱՐԼԻԵՎ ՊՈՂՈՍՅԱՆ

Կեղծ ահազանգի հեղինակը դատապարտվեց երեք տարվա ազատազրկման

ԵՐԵՎԱՆ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես հայտնի է, հուլիսի 15-ի լույս 16-ի գիշերը կեղծ ահազանգով հայտնվել էր, թե Երեւան-Գնեղարոլեռոմսկի չվերթն իրականացնող օդանավում ռումբ կա... Եվ ահա օգոստոսի 11-ին Մաշտոցի ժողովասարանում կայացվեց աննախադեպ հանցագործությունն ու նրա հեղինակին դատապարտող դատավճիռը, որով ամբաստանյալ Վարդան Վելիցյանը մեղավոր ճանաչվեց ՀՀ քր. օրի 222 հոդվածի երկրորդ մասով (չարամիտ խուլիգանություն) եւ 179 հոդվածով (տրանսպորտում գործող կանոնները խախտելը): Դրանցից առաջինով նա դատապարտվեց 3, երկրորդով 2 տարի ազատազրկման: Դատարանն, առաջնորդվելով ՀՀ քր. օրի 37 հոդվածի հիմքով, համակցությամբ բողոց վերջնականապես 3 տարվա ազատազրկման:

■ *Բոլանդական տրանսպորտային ֆիրման գործում է Սյունիքում: Երկրորդ տարին է, ինչ Սեղրյում գործում է «Յունիտրանս» միջազգային տրանսպորտային ընկերության գրասենյակը, որը իր տեսակի մեջ միակն է Սյունիքի մարզում: Բոլանդական այս ֆիրմայի Մեղրու գրասենյակի միջոցով հիմնարկ-ձեռնարկությունների եւ անհատ ձեռներեցների համար իրականացվում են տրանսպորտային բարձր մակարդակի ծառայություններ: Ներկրվում եւ արտահանվում ամենատարբեր բեռներ: Մասնավորապես, գրասենյակը Բոլանդիայում է ամառում Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրանքի:* ԼՏ

ՄԱԿ-ի կազմակերպություններն օժանդակում են ՀՀ դատախազության տեխնիկական վերազինմանը

ՀՀ դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստում ի թիվս այլ խնդիրների նշվեց համակարգի տեխնիկական վերազինման կարեւորությունը: Երեկ ՀՀ գլխավոր դատախազի, ՄԱԿ-ի փախստականների գծով հանձնակատարի ներկայացուցիչ Ռ. Ռոբինսոնի, ՄԱԿ-ի ժողովրդավարության եւ մարդու իրավունքների կենտրոնի ղեկավար Վ. Կարմիրբալյանի ստորագրությամբ ուժի մեջ մտավ եռակողմ պայմանագիրը՝ ՀՀ դատախազության տեխնիկական զինվածության, տեղեկատվական համակարգի բարեփոխման ծրագրի վերաբերյալ: Ինչպես, ներկայացնելով, ասաց Հենրիկ Խաչատրյանը, համատեղ ծրագիրը կնպաստի համակարգի տեխնիկական հագեցվածության, հեռահաղորդակցության, հեռագրային էլեկտրոնային կապի բալերավմանը եւ կադրերի պատրաստմանը, տարածքային (առաջին հերթին աղեսի գոտու) դատախազությունները համակարգչային, կապի միջոցներով, սարքավորումներով ապահովելու հնարավորություն կընձեռի: Շնորհակալություն հայտնելով ծրագրի ֆինանսավորման համար (25 հազար դոլար՝ ՄԱԿ-ի փախստականների գծով հանձնակատարի եւ 5 հազար դոլար՝ ՄԱԿ-ի ժողովրդավարության եւ մարդու իրավունքների կենտրոնի կողմից), ՀՀ գլխավոր դատախազը հավաստիացրեց, որ հաստատված գումարը «մինչեւ վերջին ցենտը» կծառայի իր նպատակին՝ ՀՀ դատախազության աշխատանքների վերակառուցմանը եւ ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելուն: Օգտվելով առիթից, որն խաչատրյանը նշեց նաեւ ԱՄՆ դեսպանատան տրամադրած 8000 դոլարը, որի շնորհիվ դատախազությունը մասամբ արդեն իսկ համալրվել է համակարգիչներով եւ կապի միջոցներով:

Պրն Ռոբինսոնն իր հերթին ողջունելով հանձնեցին ծրագրի մեկնարկը եւ ՀՀում ընթացող «դրական զարգացումների» շարքում կարեւորելով «ՀՀ գլխավոր դատախազի գրասենյակում տեղի ունեցող փոփոխությունները», նշեց, որ մարդու իրավունքների պաշտպանությանը զբաղվող յուրաքանչյուր կազմակերպություն պետք է հիմնվի ոչ միայն տեսության, այլեւ պաշտպանական եւ նյութական միջոցների վրա: «Մենք ուզում ենք օգնել գլխավոր դատախազին առավելագույնս ապահովելու եւ հնարավորինս դատախազության աշխատանքը հանրապետության ողջ տարածքում: Հուսով եմ, որ այս ծրագիրը, որ առաջին անգամ Հայաստանում է իրականացվում, կրկնվելի՝ հետագայում տարածվելով ԱԳՀ մյուս երկրներում», ասաց պրն Ռոբինսոնը:

Վլադիմիր Կարմիրբալյանը, նշելով իր կազմակերպության համենատաբար համեստ մասնակցությունը ներկայացված ծրագրում, հույս հայտնեց, որ ծրագրի շրջանակներում նախատեսված սեմինարները, գիտաժողովները եւ դասընթացները դատախազության համակարգը կհարստացնեն միջազգային, ինչպես նաեւ Հայաստանում վերջին տարիներին կուտակված դրական փորձով: Գլխավոր դատախազը մի վերջին «վրձնահարվածով» ամփոփեց իրադարձությունը՝ խորհրդանշական համարելով, որ հատկապես փախստականների գործերով եւ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունն են օժանդակում դատախազության բարեփոխումներին. «Իմ խորին համոզմամբ, դատախազությունն է, որ պետք է ապահովի մարդու իրավունքների պաշտպանությունն ու մարդասիրությունը, եւ ինչո՞ւ չէ, նաեւ փախստականների հետ կապված բազում հարցերի լուծումը Հայաստանում»:

Է. ՊՈ.

ԵՐԵՎԱՆ

Գեսառում հայտնաբերվել են խոլերայի ոչ ակտիվ կորամանրէներ

ԵՐԵՎԱՆ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ԼՈՒՅՍԱՆ ՏՊՍՆ: Օգոստոսի 12-ի դրությամբ Երեւանում խոլերայով հիվանդացության ոչ մի դեպք չի գրանցվել: Այս մասին հայտնեց ՀՀ Առողջապահության նախարարության հիգիենայի եւ հակահամաճարակային հսկողության վարչության պետ Մանվել Մանրիկյանը: Նա նշեց, որ խմելու ջրի, փողոցային աղեւտրի եւ աղիքային հիվանդությունների նկատմամբ խիստ վերահսկողությունը շարունակված է սահմանակից երկրներից, ուր դիտվում են այդ հիվանդության առանձին դեպքեր, հանրապետություն խոլերայի ներթափանցումը նախազգուշացնելու ուղղությամբ կանխարգելիչ եւ հակահամաճարակային միջոցառումների հետ:

Մեկնաբանելով խաղաքի կենտրոնում խոլերայով հիվանդացության դեպքերի մասին տարածված լուրերը, Երեւանի 4-րդ պոլիկլինիկայի (Կենտրոնական համայնք) տնօրեն Ռուբեն Վարդանյանը հայտնեց, որ պոլիկլինիկայի բուժանձնակազմը ծեռնարկում է շրջանի ավելի քան 30000 բնակչության առողջության վերահսկման եւ կանխարգելման խիստ միջոցներ: Գեսառում խոլերայի ոչ վարակիչ (այսինքն ոչ ակտիվ) կորամանրէների հայտնաբերման հետ կապված: Նրա խոսքերով, այդ փաստը սովորական երեւույթ է. սա չի նշանակում, որ խաղաքում խոլերա է բռնկվել եւ չպետք է առանձնակի տագնապ հարուցի:

Ռ. Վարդանյանը ընդգծեց, որ ներկայումս հատուկ ուշադրություն է դարձվում աղիքային հիվանդությունների կանխարգելմանը եւ վերահսկողությանը, քանի որ վճարովի բժշկություն մատուցելու հետ վճարովոր վարակիչ հիվանդություններով հիվանդները միջոցներ չունենալու պատճառով ժամանակին չեն դիմում բժշկի եւ կարող են, այդպիսով, համաճարակի աղբյուր դառնալ:

Կանեփն ու կակաչը ՆԳ ոխերիմ թշնամիներն են

ԵՐԵՎԱՆ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՆԳ եւ ԱԱ նախարարության վարչություններն ու տարածաշրջանային, մարզային եւ տեղային բաժինները, «Կանեփ-կակաչ-97» ծրագրի շրջանակներում, համառ պայքարի են դուրս եկել «վտանգավոր» ծաղկի ու կանաչի դեմ: Տարվա սկզբից հանրապետությունում հայտնաբերվել, ոչնչացվել եւ ոչնչացվել է 114 հազար 50 կգ կանեփի կանաչ զանգված եւ 6 հազար 400 կգ կակաչ:

ՆԳ եւ ԱԱՆ հասարակական կարգի եւ լրատվության վարչությունից հայտնեցին, որ վերջին հայտնաբերումները կատարվել են օգոստոսի 11-ին Արարատի մարզում 11 հազար 500 կգ եւ Կոտայքի մարզի 11 գյուղերում 1900 կգ. ավելացնելով, որ «Կանեփ-կակաչ-97» համազգային միջոցառումը շարունակվում է:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Գլխավոր եւ հրատարակիչ
«Ազգ» ընկերի գլխավոր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Հանրապետական ծառայություն / 581841
Apple Macintosh համակարգային շարվածք «Ազգ» թերթի
Նյութը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetutiun st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ազգային

Մոսկվայի Ս. Գեորգ մատուռը վերջապես կունենա՞ հոգեւոր սպասավոր

Այս տարվա սկզբին, Սուրբ Ծնունդի օրը, Մոսկվայի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Տիրան արհեպիսկոպոս Կյուրեղյանը կատարեց օծումը Սուրբ Գեորգ մատուռի, որը կառուցվել էր ծնունդով դարաբաղցի, նորօրյա բիզնեսմեն Արթուր Բաղդասարյանի միջոցներով: «Ազգը» առաջինը ունեցավ առձանագրելու այդ փաստը անմիջապես արարողության վայրից: Մոսկովյան մեծ ավտոմայրուղու վրա կառուցված եկեղեցական այս համալիրը, որ ներառում է մատուռը, մատաղատունը, խաչքարը նվիրված Մոսկվայի 850-ամյակին, ճանաչագործ Ֆրեդ Սողոյանի կերտած Աստվածամոր խստաճաշակ արձանը Փրկչի դեմքն ափերում, արտաքին աշխարհից մեկուսացված է պարսպով եւ ապրում է ինքնուրույն կյանքով: Ներկայումս նույն ճանաչագործի էսքիզով կառուցվում է, նաեւ հուշաքարտեզ բույր գրանիտից ու մարմարից, որը կարծում ենք, նույնական զուտ կլինի, ինչպես մնացյալը, եւ հերդաձեւ: Տիրան արքեպիսկոպոսը ի սկզբանե հետեւել եւ փույթ առ փույթ աշխատել էր յուրաքանչյուր կառույցը հիմից սկսած մինչեւ մատուռի օծումը: Մաս առցվում է, նաեւ հուշաքարտեզ բույր գրանիտից ու մարմարից, որը կարծում ենք, նույնական զուտ կլինի, ինչպես մնացյալը, եւ հերդաձեւ: Տիրան արքեպիսկոպոսը ի սկզբանե հետեւել եւ փույթ առ փույթ աշխատել էր յուրաքանչյուր կառույցը հիմից սկսած մինչեւ մատուռի օծումը: Մաս

Մեր կառույցը ոգեւորությամբ ու զոհունակությամբ ընդունեցին նաեւ մոսկովյան իշխանությունները: Քաղաքապետ Յուրի Լուժկովը անմիջապես այցելեց, մոմ վառեց այնտեղ, զույգի բռնվեց հայ հասարակության հետ: Նրա հետ էին քաղաքային իշխանության գրեթե բոլոր ներկայացուցիչները, փոխնախագահներ պարոնայք Ռեյսինգը, Նիկոլսկին, այլ նախարարներ: Մեզ մոտ եղել են նաեւ Օ. Սոսկովեցը, Օ. Լոբովը, Ա. Տոլեեւը այցելուների գրքում թողնելով իրենց գրառումները:

Միակ խնդիրը, որ հիմա հուզում է մեզ, հետեւյալն է. կունենա՞ մատուռը հոգեւոր սպասավոր: Եթե այո, ապա դա կբարձրացնի կառույցի ոգեղենությունը: Ոչ թե վարկը, այլ հենց ոգեղենությունը: Որովհետեւ հոտը մնացել է առանց հովվի: Իսկ հովիվն անհրաժեշտ է: Ոգու վերածնման համար: Իսկ եկեղեցու դերը ոգեղենության վերածնունդն է: Մեր պատմական ավանդույթների վերհանումը: Մենք սկսել ենք մոռանալ: Հավատը ազգի ինքնաարտահայտման միջոցն է: Չուտ ազգային բնույթի դրսեւորումներից մեկը: Յուրաքանչյուր ազգինը իրենը: Ստեղծել պատշաճ մշակութային համալիր եւ չունենալ այնտեղ հոգեւոր ներկայացուցիչ՝ կարծում եմ, սխալ է: Հիմա կարիք չկա խոսել ինչ-որ բաժանումների, ինչ-ինչ հարաբերությունների, հարակից ինչ-ինչ հասատությունների մասին: Դա առանձին տարածք է 1200 քմ ընդհանուր մակերեսով, որի համար մեր Ֆիրման վարձավճար է մուծում Մոսկոմին: Ընդհանրապես Մոսկվան վիթխարի քաղաք է: Կոնգլոմերատ, խառնակույտ: Ուր յուրաքանչյուր հոդակտոր ահռելի գումար արժե: Ես շրջել եմ Եվրոպայում, Արեւելքում: Տեսել եմ ժողովրդի, իշխանությունների արտոյտ, հուզաբերիր վերաբերմունքը պատշաճումնային կառույցների հանդեպ: Ի՞նչ տարբերություն, ինչի կողքին են գտնվում: Չէ՞ որ, երբ մարդն ուզում է հաղորդակցվել Աստծո հետ, դա անում է եւ անապատում, եւ խելահեղ քաղաքում:

– Մատուռը կառուցվեց, երբ մոտիկ տարածքում հասատությունները (բեսարաբ, ասունա եւ այլն) արդեն գործում էին: Ինչո՞ւ այն ժամանակ այդ հանգամանքը հաշվի չառնվեց:

– Յավոք, չգիտեմ: Եկեղեցին չի կարող ժողովրդից դուրս լինել: Իրավասու չեմ, միգուցե նման բաներ ասել, բայց ոչ մի եկեղեցական կանոնագրքում գրված չէ, որտեղ պետք է կառուցել կամ չկառուցել եկեղեցի: Դրանք զուտ արհեստական խոչընդոտներ են: Կարծում եմ, Աստուծոյ Արքան հայրը ի վերջո կհանդարտվի, առավել եւս, որ դա իր հոգեզավակն է: Նրա խոսքերով սա հոգեւոր պատշաճումնային միակ կառույցն է Ռուսաստանում, որ ստեղծվել է հայ եկեղեցու բոլոր կանոնների համաձայն: Նա իր օրհնությունն է հղել սկզբից մինչեւ...

– Փաստորեն, հոգեւոր սպասավորի հարցն անմիջականորեն Արքազանի՞ց է կախված:

– Որքան հասկանում եմ այո: Եվ սպասավոր կարգելու, եւ ծեսերն իրագործելու պատասխանատվությունը ընկնում է նրա ուսերին:

– Ձեր կարծիքով ի՞նչ նկատառումներ կան նրա արգելքի հիմքում:

– Չեմ կարող հասկանալ: Սկզբում Արքազանը խոստացավ մեզ քահանա հատկացնել: Ես խնդրեցի, որ նախնական շրջանում նա ծառայություններ մատուցի շաբաթվա երեք օրերին: Եթե հարկ լինի՝ ապա ամեն օր: Ես առաջարկեցի նույնիսկ հատուկ տնակ կառուցել համալիրի բակում քահանայի ժամանակավոր բնակության համար: Ես պատրաստ էի ապահովել նրան աբխազավարձով, հանդերձասարքով, զգեստավորումով, բոլոր անհրաժեշտ պարագաներով: Իմ միակ ցանկությունն էր, որ նա վերադարձներ մեր ազգային ծեսերը, այդ թվում կնունքը, հարսանիք եւ այլն: Այդ բոլոր արարողությունները ներկայումս կատարվում են Հայկական եկեղեցում (նույնքան մատուռ է), որը գտնվում է գերեզմանատանը: Այդ հանգամանքը, որոշ չափով շփոթության մեջ է գցում մարդկանց: Չէ՞ որ տարածքը, որ ամփոփված են մեր նախնիների աճյունները եւ հարազատների արարողությունը ինչ-որ չափով անհամատեղելի են:

Նրանք պետք է հասկանան մի բան: Եթե ես եւ այն խումբը, որի հետ աշխատում ենք այսօր Մոսկվայի տարածքում մատուռ են կառուցում, ուրեմն միայն դրանով չենք սահմանափակվի: Մենք կշարունակենք կառուցել: Մենք մեծ ծրագրեր ունենք: Ուզում ենք եկեղեցիներ կառուցել Արցախում, Հայաստանում: Եթե դա պարապվելի է, թող Արքազանը պարզապես բանադրի մեզ: Եթե դրվատելի է, աջակցի: Չէ՞ որ մենք պարտավոր ենք վերադրեցնել եկեղեցին: Ներկայումս Սամբուլում գործում է հայկական 49 եկեղեցի: Իսկ Մոսկվայի պես հսկա քաղաքում ընդամենը երկու մատուռ է: Նախորդը դեռ 19-րդ դարասկզբի կառույց է: Ինչո՞ւ Մոսկվայում հայ եկեղեցու ներկայացուցչությունը այդքան անտարբեր է, անբահագրգիռ: Կարծում եմ, վաղ թե ուշ որեւէ պատասխան կտանան: Մինչ այդ իմ խնդիրը կառուցելն է: Եվ հանձնել իրենց թող կառավարեն: Այնտեղ ինձ ոչինչ հարկավոր չէ: Մենք բավարար չափով հասատություններ ունենք, որ կարող ենք դեկավարել:

– Ձեր հրապարակումներից հետո Մայր աթոռից որեւէ արձագանք եղե՞լ է:

– Ոչ: Ինձ համար անհասկանալի էր, ինչու, երբ Գարեգին Ա կաթողիկոսը եկավ Մոսկվա մեզ շայցելեց: Նա կարող էր մեզ հրավիրել: Մենք կստեղծեինք բոլոր պայմանները, որ նա համալիրը դիտելու հնարավորություն ունենար: Մենք խնդարհվում ենք նրա առաջ եւ կամենում ենք հաղորդակցվել նրա հետ: Կարծում եմ, դրանից եկեղեցին միայն կշահի: Եվ ոչ միայն եկեղեցին: Այլեւ ժողովուրդը:

Խմբագրության կողմից

Պրն Բաղդասարյանի նկատառումների մեջ տեսնելով մի քանի վիճահարույց հարցեր, այնուամենայնիվ մեր պարտքը համարեցինք անկողմնակալ ձեւով ներկայացնել նրա խնդիրը: Առարկություններ թող նամակ ենք մյուս կողմերին:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

ԽՍՐԲԵՐԴ

Զոհվածներին հիշելը ապրողներին է պետք

«Կգա ժամանակ, եւ հոգու սով կլինի ձոխ սեղանների շուրջ»: Իմաստասեր բանաստեղծը մասամբ էր ճիշտ: Որովհետեւ հոգու սով եղավ, իսկ ձոխ սեղաններ... ավա՜ղ: Ու հիմա, երբ թվում է, թե անհուսալիորեն ամլացել են մեր հոգիները, բարության, նվիրումի, թող բարձր չհնչի՝ իսկական հայրենասիրության օրինակ են մեզ տալիս զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված այս յուրօրինակ հուշարձան ստեղծողները: Մարդիկ, կինը» հանրապետությունում շատերին հայտնի Սիդա Տեր-Կարապետյանն է՝ Սեն Կարմիր ավետարան համայնքի տնօրենը, բարեգործը, ում շուրջը համախմբվել են ինժեներ ու երաժիշտ, շինարար ու նկարիչ, քանդակագործ, վարորդ, ամենատարբեր մասնագիտությունների տեր մարդիկ:

Ես չեմ ուզում ներկայացնել հրաշալի կազմակերպված բացման արարողությունը, մասնակցություն ունեցած հայտնի անուններ մեջբերել:

ովքեր առանց նվազագույն իսկ ակնկալիքի, առանց երեւալ-ցուցադրվելու մարմաջի, գլուխները կախ՝ գործ են անում: Իրենց արածի կարեւորությունը գիտակցելով: Ու այս ամենում գլխավոր «մեղավորը» մի հայ կին է:

Եվ նրա ու իր ընկերների մեծագույն երազանքը այս հուշարձանի հարեւանությամբ... եկեղեցի կառուցելն է:

Այսպես տարօրինակորեն՝ անհասցե, առանց անուններ հիշատակելու էլ թերեւս կարելի էր ավարտել, եթե... ընթերցողը նեղեր: Ճիշտը, այնուամենայնիվ նրանց մասին երկու խոսք ասելն է:

Խարբերդի ամայի մի տարածքում գիշեր-ցերեկ կառուցվեց այս յուրահուշարձանը եւ հուշաղբյուրը:

Իսկ վերը հիշատակված «մեղավոր

Նախկինում անշունչ այս տարածքը, չեմ կասկածում, վաղվանից ուրիշ խորհուրդ կունենա: Մեր զոհված տղաներին նվիրված հուշարձանը կդառնա սրբատեղի նրանց հարազատների, ընկերների, մեզ բոլորիս համար: Ու թող մեղմի նաեւ այն վիշտն ու վիրավորանքը, որ մեր անտարբերությամբ հաճախ պատճառել ենք լքված, ճակատագրի փորձություններին հանձնված նրանց ապրող ընկերներին:

Հայի սեղանը հարուստ է կենացներով: Ու եթե նրանց կենացն ենք խմում, չլինի հերթականը եւ չլինի պարտականության պես մի բան: Յուրաքանչյուր անգամ ավելի խոր աստիճանի

ՍԻՄՈՆ ՀԱՍԿՈԲՅԱՆ

Յայտարարություն

Ուրախությամբ կը յայտնենք, որ Մեծի տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան Հայաստանեայց եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու վարիչ տնօրէնութեան կազմակերպած միջ-թեմական համագումար խորհրդակցական ժողովը տեղի պիտի ունենայ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ, 18-30 օգոստոս 1997-ին, հովանաւորութեամբ Ամենայն հայոց հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա կաթողիկոսի եւ Մեծի տան Կիլիկիոյ կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա կաթողիկոսի: Համագումարը կը վայելէ նաեւ վերին հովանաւորութիւնն ու զօրակցութիւնը Լ. Ղ. Հանրապետութեան կառավարութեան:

Համագումար խորհրդակցական ժողովին կը մասնակցին Լիբանանի, Սուրիոյ, Կիպրոսի, Յունաստանի, Թեհրանի, Քուէյթի, Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Կանադայի թեմերու, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Արցախի թեմերու կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչներն ու կրօնական դասաւանդութեան դասախօսները:

Համագումարին հիմնական թեման է «Ճանչնալ մեր եկեղեցին իր ամբողջական դաստիարակութեամբ»:

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

Մենդի արդյունաբերության եւ գյուղատնտեսության ամերիկյան վարկային հիմնադրամ Շիրակի մարզի համար

Ամերիկյան դեսպանատունը հայտարարում է վարկերի հատուկ հիմնադրամի ստեղծման մասին, որի նպատակն է օժանդակել Գյումրիի եւ Շիրակի մարզի սննդի արդյունաբերության եւ գյուղատնտեսության մասնավոր սեկտորի վերականգնմանը: Վարկերի այս հիմնադրամը կառավարվելու է Մ. Նահանգների գյուղատնտեսության նախարարության մարկեթինգի օժանդակության ծրագրի կողմից:

Մարկեթինգի օժանդակության ծրագիրն ընդունում է դիմումներ ֆինանսական օգնության համար Գյումրիի եւ Շիրակի մարզի մասնավոր ֆիրմաներից եւ անհատներից, որոնք ընդգրկված են սննդի արդյունաբերության եւ գյուղատնտեսության մեջ: Ֆինանսական օգնությունը կլինի կարճաժամկետ եւ միջին ժամկետով վարկերի տեսքով: Այդ վարկերի նպատակն է խրախուսել մասնավոր սեկտորի զարգացումը գյուղատնտեսության մեջ: Վարկերի բաշխման ժամանակ հաշվի կառնվի ընտանիքների եւ ձեռնարկությունների թիվը, որոնք կշահեն տվյալ վարկ ստացողի գործունեության արդյունքում:

Կտրվեն երեք տեսակի վարկեր.

մինչեւ 5000 դոլար վարկեր՝ միկրոձեռնարկության զարգացման համար,

կարճաժամկետ (մինչեւ 90 օր) գործառնական վարկեր՝ անհատներին եւ ձեռնարկություններին մարկեթինգի եւ պատրաստի արտադրանքների առաքման հարցերում օժանդակելու համար,

ավելի մեծ, մինչեւ 50.000 դոլարի, նպատակային վարկեր որոշ ծյուղերի համար: Այս վարկերը կտրամադրվեն այն ձեռնարկություններին, որոնք ընդգրկված են տեղական հումքի վերամշակման մեջ, ինչպես նաեւ նրանց, որոնք ստատեգիկ գյուղատնտեսական արտադրանքներ են տրամադրում բազմաթիվ արտադրողներին:

Այս վարկերից օգտվելու իրավունք ունեն այն ձեռնարկությունները, որոնք զբաղվում են սննդի կամ գյուղատնտեսական արտադրությամբ, որոնք լրիվ սեփականաշնորհված են, օրենքով գրանցված եւ ունեն հումքատարախան արտոնագիր: Գրավը պարտադիր է, սակայն այդ պահանջը կարող է հանվել փոքր ձեռնարկությունների վարկերի համար:

ՍԵՏ

ԱԶԳ

Ոչ տեսական կարդացվածներ

Սոցիալական հաղթականություն (կարիքավորության սահմանում, սոցիալական աջակցություն)

Այժմ գանձ չափանիշներին եւ անապահով խավերի որոշման սկզբունքներին: Քաղաքակիրթ աշխարհում անապահովության որոշման մեկ հստակ ձեւ է գործում՝ եկամուտների արձանագրումը եւ դրա՝ սպառողական զամբյուղի արժեքին (կամ վերը նշված աղքատության սահմանին) համադրասախանությունը: Դա կատարվում է յուրաքանչյուր անհատի կողմից եկամուտների հայտարարագրման ճանապարհով: Այս եղանակն է կիրառվում ե՛ւ հարկային քաղաքականությունը, ե՛ւ կարիքավոր խմբերը որոշելիս: Մեզանում այս ուղղությամբ անգամ կես քայլ արված չէ: Եկամուտների հայտարարագրման ընդդիմադիրները որպես կռվան նշում են Հայաստանում այսօր առկա սվերային տնտեսության մեծ չափերը, ոչ պաշտոնական եկամուտների ծավալը (ո՞ր նախարարն է 80 դոլարով ապրում. ոչ ոք, եւ այս մասին գիտեն բոլորը, բայց մեզանում նորմալ է դիտվում դա): Դրա փոխարեն այսօր գործում են կարիքավորության որոշման կասկածելի մեխանիզմ եւ վիճելի չափանիշներ: Ասենք, անապահովների թվին են դասվում միայնակ ծերերը (զավակներ չունեցող), միայնակ մայրերը, զոհված եւ հաշմանդամ դարձած ազատամարտիկների հարազատները, բոնադասվածները, չորս ու ավելի երեխա ունեցող ընտանիքները եւ այլն: Բոլոր այս դեպքերում՝ նախ եկամուտների չափը կարող է լինել խիստ տարբեր, ապա ակնհայտ է, որ կարիքավորի եւ վնասի հասուցման չափանիշով ընտրվածի միջեւ տարանջատում չկա: Դրան գումարենք նաեւ, ասենք, միայնակ ծերերի հայտնաբերման մեխանիզմի կասկածելիությունը (զավակները կարող են նրա փաստաթղթերում արձանագրված չլինել): Կամ որքանո՞վ է արդարացի երեք անապահով զավակ ունեցող եւ նրանցից ոչ մի օգնություն չստացող ծերունուն ապահով համարելը: Մի ծեր կին իր նամակում երանի էր տալիս «չբեր կանանց»: Վերջապես կյանքն ապացուցեց, որ կարիքավորության որոշման այս բոլոր մեխանիզմները չեն արդարացնում («Փարոս» ծրագրի ցուցակները եւ դրանց «զսման» աշխատանքները վկա):

Եկամուտների հայտարարագրման (միակ ճշմարիտ) եղանակի կիրառումը ոչ միայն սոցիալական ավելի արդարացի քաղաքականություն վարելու հնարավորություն կտա, այլեւ հասարակական հարաբերությունների առողջացման հիմք կհանդիսանա: Եվ դա որքան արագ սկսվի եւ որքան «վերեւից» սկսվի, այնքան արդյունավետ կլինի: Մնացած բոլոր աշխատանքները (ռիսկի խմբերի որոշում, փաստաթղթերի ներկայացում-ստուգում, սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների կողմից հաշվառում եւ այլն) այսօր սիզիֆյան աշխատանքի են նմանվում, քանի որ իրական կարիքավորների մի հսկա մաս դուրս է մնում պետական հոգածությունից, եւ ընդհակառակը՝ ոչ կարիքավորների մեծ թվանակ օգտվում է պետական տուղ օգնությունից: Իսկ անցումային այս փուլում, երբ դեռ իրական եկամուտները չեն արձանագրվում, ճիշտ կլիներ կարիքավորների որոշման գործառույթը դնել համայնքների վրա: Ո՞վ ավելի լավ կիմանա կարիքավորին, քան բենի իր հարեւանը կամ թաղապետարանի երկարամյա աշխատողը: (Ասում ենք ու հուսահաս հիշում տեղական կառավարման մարմինների ընտրությունները): Շարաշահումները նվազեցնելու ձեւեր շատ կան. օգնություն ստացողների ցուցակները բենի մուտքում փակցնելուց՝ մինչեւ ստուգումներ եւ այլն:

Այժմ գանք սոցիալական աջակցության չափերին. նպաստներ, դրամական փոխհատուցումներ, թոշակներ: Հանրապետությունում այսօր կա 113 հազար հաշմանդամ, 42 հազար միակողմանի ծնողազուրկ երեխա, 40 հազար բազմազավակ ընտանիք, 607 հազար կենսաթոշակառու եւ այլն: Սրա դիմաց 1 մլն 413 հազար մարդ զբաղված է տնտեսությունում, 166 հազարը գործազուրկ է (միայն զբաղվածության կենտրոնում գրանցվածները): Չգիտեմ՝ էլ ո՞ր երկրում կա նման ողբերգական վիճակագրական պատկեր (ի դեպ, 1994-ին ունեցել ենք ընդամենը 91 հազար գործազուրկ):

Տարեցտարի սոցիալական վիճակը բարդանում է, սոցիալական դժգոհությունը՝ աճում, իսկ սոցիալական քաղաքականությանը տրամադրվող միջոցները համամասնաբար չեն աճում, այլ՝ հակառակը: Այդ է վկայում ՀՀ սոցիալական ապահովության նախարարության ընդունելությունների սրահի այցելուների քանակը (օրական մոտ 50 մարդ), վրդովմունքը, վեճն ու աղմուկը: Մշտապես քաղաքացիների հետ գործ ունեցող նախարարությունում երբեւէ նման վիճակ չի եղել: Սա մասամբ բացատրում են արտոնությունների համակարգից դրամական փոխհատուցումների (նախարարությունում ընդունված տերմինով՝ տրանսֆերտների) համակարգին անցնելով: Ի՞նչ է նշանակում այդ: «Ապահովված» քաղաքացիներին բացատրենք. եթե անցյալում պետությունը անապահովներին արտոնություններ էր տրամադրում (անվճար երբեւեկության վկայական, զեղչ գներով կոմունալ ծառայություններից օգտվելու իրավունք եւ այլն), ապա այժմ դրամական փոխհատուցում է տալիս: Միանգամից ասենք, որ անցումը ճիշտ է, ողջ աշխարհում այդպես է ընդունված (առաջին կարգի հաշմանդամը չի օգտվում տրանսպորտից եւ այդ 1300 դրամը օգտագործում է իր այլ կարիքների համար): Այլ բան է, որ անցումը կիրառվել է որպես պետական ֆինանսները տնտեսելու ձեւ: Երբ փորձեցի պարզել, թե դրամական արտահայտությամբ ինչքան է տարբերվում արտոնությունների չափը փոխհատուցումներից, դժվարությունների հանդիպեցի: Սոցիալական ապահովության նախարարությունում նախ նշեցին, որ արտոնությունների դրամական գնահատման իրական տվյալներ չկան (պատկերացրիք, չէ՞, ինչպես է աշխատում պետական ապարատը): Ապա որպես գաղտնիք նշեցին, թե 2-3 անգամ փոխհատուցումները «էժան» են նստում պետության վրա, քանի որ մի քանի ռիսկի խմբեր զրկվել են նախկին արտոնություններից, եւ ընդհանրապես պետական աջակցությունը նվազեցվել է: Առաջին եւ երկրորդ խմբի հաշմանդամները, մանկուց հաշմանդամ երեխաները, միայնակ չաշխատող կենսաթոշակառուները եւ բոնադասվածները ամենաբարձր փոխհատուցումն են ստանում՝ ամիսը 3300 դրամ: Հիմա պատկերացրեք այն «կարիքավոր-արտոնյալի» վիճակը, որը 3300 դրամով մեկ ամիս պիտի գոյատեւի:

Ընդունարանի այցելու մի ծերունի, որ Արցախում միակ որդուն էր կորցրել, խնդրում էր ցույց տալ այն պաշտոնյային, որն իր ապրելու համար սահմանել է 6000 դրամ (3300 դրամ նպաստ եւ 2700 դրամ կենսաթոշակ): Նա փորձում էր հասկանալ՝ ինչի՞ց ելնելով են այդ գումարը սահմանել: Նախարարության պաշտոնյաներն ի պատասխան ասում էին՝ պետական բյուջեի հնարավորություններից: Իսկ մի՞թե արդարացի է մոտ 1 մլն կարիքավորներին (եթե կարիքավոր համարենք նաեւ կենսաթոշակառուներին) չապրել պարապրելը: Գուցե ավելի բարոյական կլիներ նրանցից մի քանի հարյուր հազար ընչազուրկների համար ինչ թե շատ տանելի պայմաններ ստեղծե՞լը, եւ ոչ թե բոլորին խաբելը:

1998-ի հունվարի 1-ից անցում է կատարվում ընտանեկան նպաստներին (Համաշխարհային բանկի աջակցությամբ): Այժմ կառավարությունը ստեղծել է հանձնաժողով՝ սոցիալական ապահովության առաջին փոխնախարար Գագիկ Եգանյանի գլխավորությամբ, որը պետք է ճշգրտի նպաստի տրամադրման մեխանիզմները:

Կենսաթոշակներ

1996-ի հունվարի 1-ից գործող կենսաթոշակային ապահովության մասին նոր օրենքը փոխեց կենսաթոշակի տրամադրման սկզբունքները: Նախ՝ բարձրացվեց տարիքը: Այս տարի կենսաթոշակի են անցնում 61 տարեկան տղամարդիկ եւ 56 տարեկան կանայք (ըստ օրենքի, հետագայում 65 տարեկան տղամարդիկ եւ 63 տարեկան կանայք): Եվ սա այն դեպքում, երբ հանրապետությունում կյանքի միջին տեւողությունը 69 տարի է:

Մեր հասարակության մեջ բնակչության ծերացման միտում է նկատվում (ծերերի տեսակարար կշիռը տարեցտարի աճում է): Այսօր արդեն 100 աշխատողը մոտ 43 կենսաթոշակառու է պահում: Տնտեսության մեջ զբաղվածների քանակը նվազում է, նվազում է նաեւ կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամին մուծումների չափը: Այստեղից էլ կենսաթոշակների վճարման դժվարությունները եւ դրանց չափերի կրճատման տարվող քաղաքականությունը: Դրան գումարվում է նաեւ վճարողների կողմից հիմնադրամին մուծումներն ուշացնելը կամ պարզապես չկատարելը: Եթե նախկին օրենքով կենսաթոշակները սահմանելիս հաշվի էր առնվում վերջին տարիների աշխատավարձի չափը, ապա նոր օրենքով միայն աշխատանքային ստաժն է կարեւորվում: Ընդ որում՝ յուրաքանչյուր տարվա համար մինչեւ 15 տարվա ստաժի դեպքում 30 դրամ է ավելանում 2200 դրամ բազային թոշակին: Պատկերացնո՞ւմ եք, մեկ տարվա տնաքան աշխատանքը 30 դրամ է գնահատվում: Այսինքն՝ 60 տարի աշխատած ծերունին ստանում է առավելագույն կենսաթոշակ՝ 4675 դրամ: Մի պարզ հաշվարկ կատարենք. եթե միջին աշխատավարձը 10 հազար դրամ է եւ դրանից 34 տոկոս վճարվում է կենսաթոշակային հիմնադրամին, ապա միջին կենսաթոշակը պիտի կազմի մոտ 7700 դրամ (այսօրվա 3100-ի դիմաց): Ո՞ւր է գնում մնացածը, որտե՞ղ է սխալը՝ միջին աշխատավարձի չա՞փն է մեծացված, թե՞ մուծումներ չեն կատարվում: Ի դեպ, կենսաթոշակների անցյալում ընդունված ինդեքսավորում վերջին երկու տարում չի եղել, եւ դրամի կուրսի անկման հետեւանքով կենսաթոշակառուները մոտ 1000 դրամ եկամուտի իրական կորուստ են ունեցել:

Աշխատանք եւ զբաղվածություն

Զբաղվածության կենտրոններում արձանագրված գործազուրկները ստանում են 1800-3000 դրամ նպաստ (կախված այն բանից՝ աշխատանքային կարգապահությա՞ն խախտման համար է ազատվել աշխատանքից, թե՞ սեփական դիմումով):

Ինչ վերաբերում է աշխատանքի եւ զբաղվածության խնդիրներին, սա պետական սոցիալական քաղաքականության ամենախոցելի բնագավառն է: Զբաղվածության մասին 1991-ին ընդունված օրենքը թույլ չէր տալիս վարել ակտիվ քաղաքականություն: 1997-ի հունվարի 1-ից ընդունված նոր օրենքը հնարավորություն է տալիս վարելու ակտիվ քաղաքականություն: Այսինքն՝ զբաղվածության ծառայությունն իրավունք ունի աջակցելու գործազուրկներին՝ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, որի համար նրանց տրամադրվում է անհատույց ֆինանսական միջոցներ (մինչեւ 540 հազար դրամ): Հաշմանդամներին աշխատանքի տեղավորման նպատակով այդ ծառայությունը կարող է ստեղծել մասնագիտացված ձեռնարկություններ եւ արտադրամասեր: Օրենքը հնարավորություն է տալիս նաեւ գործազուրկների վերամասնագիտացում կազմակերպել: Վերամասնագիտացման ճանապարհով լուծվում է եւս մի խնդիր. օտարերկրյա ներդրումների շնորհիվ [illegible] վերակազմվում են որակյալ մասնագետներով: Ուստի նախարարության ազգավարությունը զբաղվածության բնագավառում մեկն է՝ ապահովել բարձր զբաղվածություն կամ որ նույնն է՝ ցածր գործազրկություն: Գործազրկության ցանկալի ցուցանիշը ողջ աշխարհում 5-6 տոկոս է կազմում: Հայաստանում այսօր այն ընդամենը 11 տոկոս է: Բյուջետային ոլորտում աշխատողների համար անհրաժեշտ է ճշտել աշխատանքի տարիքային սահման, որի դեպքում նրանք ժամանակին կթոշակեն իրենց զբաղեցրած պաշտոնը:

Այսօր դեռեւս սույն նախարարությունը զբաղվում է ավելի շատ նպաստներ ու թոշակներ բաշխելով, քան աշխատանքի հիմնահարցերով (հնացած աշխատանքային օրենսդրության մշակում, աշխատատեղերի ստեղծման խթանում, աշխատանքային հարաբերությունների կարգավորում, աշխատողների պաշտպանվածության բարձրացում, ընդհանրապես նրանց շահերի պաշտպանություն եւ այլն): Սակայն այս ամենը մղվել է ետին պլան, իսկ նախարարությունը վերածվել բարեգործական կազմակերպության (այստեղ երբեմն նույնիսկ դրամական օգնություն են տալիս): Զբաղվածության ծառայությունների միջոցով 1996-ին աշխատանքի է տեղավորվել ընդամենը 5000 մարդ: Ամենուրեք շահագործվում է երեխայի աշխատուժը, աշխատավարձի չափերը ցածր են, զանգվածային աղքատիկի ազատումներ են թույլ տրվում, սխալ հարկային քաղաքականությամբ կատեգվում է նոր աշխատատեղերի ստեղծումը, իսկ աշխատավարձից պահումները նպաստում են սվերային գրրծունեության աճին:

Ժամանակին, երբ հիշում եմ, «Հանրապետություն» միավորումը խոստանում էր 400 հազար աշխատատեղ ստեղծել:

Ինչ վերաբերում է փախստականների նկատմամբ տարվող քաղաքականությանը, ութ-ինը տարի է անցել մեր հայրենակիցների Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու օրերից, սակայն մենք շարունակում ենք նրանց փախստական կոչել՝ այդ պիտակը ամրագրելով մինչեւ իրենց կյանքի վերջը: Այո, կան Ադրբեջանից, Աբխազիայից տեղափոխված հայեր, որոնք այսօր չունեն աշխատանք եւ բնակարան: Բայց մենք համառորեն նրանց ներարկում ենք իրենց հողում հյուր, տուժած, փախստական լինելու հոգեբանությունը: Սա, թերեւս, նաեւ քաղաքական պատճառներ ունի:

Նախարարություն

Յոթ տարում սոցիալական ապահովության նախարարությունը երեք նախարար է փոխել (Աշոտ Եսայան, Ռաֆայել Բագոյան, Հրանուշ Հակոբյան), մի քանի անգամ անվանումն է փոխվել, կառուցվածքը, բենը: Յուրաքանչյուր անգամ նախարարությունը մի քանի ամսով կաթվածահար է եղել՝ աշխատողների կրճատումներ, սպասողական վիճակ: Ամենաքաց, ամենաղեմոկրատ եւ դեպի մարդն ուղղված աշխատաոճը նախարարությունն ունեցել է Աշոտ Եսայանի ղեկավարման հինգ տարիների շրջանում: Նախարարի մոտ մնալն այդ ծանր տարիներին (1990-95 թթ.) մաքքելի էր ցանկացած այցելուի: Այդ շրջանում սոցիալական քաղաքականության հիմքն էր դրվում, պետությունը

Մեր նախարարությունները հերոսդրից

Որ անապահովները պետության վրա էժան նստեն

Կարճ սոցապ նախարարություն, երկար՝ անհասակ գործաւոյթ, անհայտ հեռանկար

Սոցիալական քաղաքականությունը մեր պետության աքիլեսյան գարշապարն է: Ընդհանրապես աղքատ պետություններում է այդպես: Մի կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության քանակն է մեծ, մյուս կողմից պետության հնարավորություններն են փոքր: Այս բնագավառում մենք չենք կարող համեմատվել փոքր թե շատ նորմալ ոչ մի երկրի հետ. քանի որ մեր «աղքատության սահմանը» եւ աշխարհում ընդունվածը համեմատության եզրեր չունեն: Ասենք. ԱՄՆ-ում այն համարվում է ամսական 400 դոլար եկամուտը. իսկ նվազագույնը. որ արձանագրված է ՄԱԿ-ի փաստաթղթերում. ամսական 30 դոլարն է: Սրա հետ ինչպե՞ս համեմատվես: Այս չափանիշներով մեզանում նույնիսկ ապահով ճանաչված պետական ծառայողը կարիքավոր է եւ սոցիալական աջակցության պետք ունի:

Սոցիալական քաղաքականությունը մեր պետության աքիլեսյան գարշապարն է: Ընդհանրապես աղքատ պետություններում է այդպես: Մի կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության քանակն է մեծ, մյուս կողմից պետության հնարավորություններն են փոքր: Այս բնագավառում մենք չենք կարող համեմատվել փոքր թե շատ նորմալ ոչ մի երկրի հետ. քանի որ մեր «աղքատության սահմանը» եւ աշխարհում ընդունվածը համեմատության եզրեր չունեն: Ասենք. ԱՄՆ-ում այն համարվում է ամսական 400 դոլար եկամուտը. իսկ նվազագույնը. որ արձանագրված է ՄԱԿ-ի փաստաթղթերում. ամսական 30 դոլարն է: Սրա հետ ինչպե՞ս համեմատվես: Այս չափանիշներով մեզանում նույնիսկ ապահով ճանաչված պետական ծառայողը կարիքավոր է եւ սոցիալական աջակցության պետք ունի:

Բոլոր այս դեպքերում՝ նախ եկամուտների չափը կարող է լինել խիստ տարբեր, ապա ակնհայտ է, որ կարիքավորի եւ վնասի հասուցման չափանիշով ընտրվածի միջեւ տարանջատում չկա: Դրան գումարենք նաեւ, ասենք, միայնակ ծերերի հայտնաբերման մեխանիզմի կասկածելիությունը (զավակները կարող են նրա փաստաթղթերում արձանագրված չլինել): Կամ որքանո՞վ է արդարացի երեք անապահով զավակ ունեցող եւ նրանցից ոչ մի օգնություն չստացող ծերունուն ապահով համարելը: Մի ծեր կին իր նամակում երանի էր տալիս «չբեր կանանց»: Վերջապես կյանքն ապացուցեց, որ կարիքավորության որոշման այս բոլոր մեխանիզմները չեն արդարացնում («Փարոս» ծրագրի ցուցակները եւ դրանց «զսման» աշխատանքները վկա):

Եկամուտների հայտարարագրման (միակ ճշմարիտ) եղանակի կիրառումը ոչ միայն սոցիալական ավելի արդարացի քաղաքականություն վարելու հնարավորություն կտա, այլեւ հասարակական հարաբերությունների առողջացման հիմք կհանդիսանա: Եվ դա որքան արագ սկսվի եւ որքան «վերեւից» սկսվի, այնքան արդյունավետ կլինի: Մնացած բոլոր աշխատանքները (ռիսկի խմբերի որոշում, փաստաթղթերի ներկայացում-ստուգում, սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների կողմից հաշվառում եւ այլն) այսօր սիզիֆյան աշխատանքի են նմանվում, քանի որ իրական կարիքավորների մի հսկա մաս դուրս է մնում պետական հոգածությունից, եւ ընդհակառակը՝ ոչ կարիքավորների մեծ թվանակ օգտվում է պետական տուղ օգնությունից: Իսկ անցումային այս փուլում, երբ դեռ իրական եկամուտները չեն արձանագրվում, ճիշտ կլիներ կարիքավորների որոշման գործառույթը դնել համայնքների վրա: Ո՞վ ավելի լավ կիմանա կարիքավորին, քան բենի իր հարեւանը կամ թաղապետարանի երկարամյա աշխատողը: (Ասում ենք ու հուսահաս հիշում տեղական կառավարման մարմինների ընտրությունները): Շարաշահումները նվազեցնելու ձեւեր շատ կան. օգնություն ստացողների ցուցակները բենի մուտքում փակցնելուց՝ մինչեւ ստուգումներ եւ այլն:

Այժմ գանք սոցիալական աջակցության չափերին. նպաստներ, դրամական փոխհատուցումներ, թոշակներ: Հանրապետությունում այսօր կա 113 հազար հաշմանդամ, 42 հազար միակողմանի ծնողազուրկ երեխա, 40 հազար բազմազավակ ընտանիք, 607 հազար կենսաթոշակառու եւ այլն: Սրա դիմաց 1 մլն 413 հազար մարդ զբաղված է տնտեսությունում, 166 հազարը գործազուրկ է (միայն զբաղվածության կենտրոնում գրանցվածները): Չգիտեմ՝ էլ ո՞ր երկրում կա նման ողբերգական վիճակագրական պատկեր (ի դեպ, 1994-ին ունեցել ենք ընդամենը 91 հազար գործազուրկ):

Տարեցտարի սոցիալական վիճակը բարդանում է, սոցիալական դժգոհությունը՝ աճում, իսկ սոցիալական քաղաքականությանը տրամադրվող միջոցները համամասնաբար չեն աճում, այլ՝ հակառակը: Այդ է վկայում ՀՀ սոցիալական ապահովության նախարարության ընդունելությունների սրահի այցելուների քանակը (օրական մոտ 50 մարդ), վրդովմունքը, վեճն ու աղմուկը: Մշտապես քաղաքացիների հետ գործ ունեցող նախարարությունում երբեւէ նման վիճակ չի եղել: Սա մասամբ բացատրում են արտոնությունների համակարգից դրամական փոխհատուցումների (նախարարությունում ընդունված տերմինով՝ տրանսֆերտների) համակարգին անցնելով: Ի՞նչ է նշանակում այդ: «Ապահովված» քաղաքացիներին բացատրենք. եթե անցյալում պետությունը անապահովներին արտոնություններ էր տրամադրում (անվճար երբեւեկության վկայական, զեղչ գներով կոմունալ ծառայություններից օգտվելու իրավունք եւ այլն), ապա այժմ դրամական փոխհատուցում է տալիս: Միանգամից ասենք, որ անցումը ճիշտ է, ողջ աշխարհում այդպես է ընդունված (առաջին կարգի հաշմանդամը չի օգտվում տրանսպորտից եւ այդ 1300 դրամը օգտագործում է իր այլ կարիքների համար): Այլ բան է, որ անցումը կիրառվել է որպես պետական ֆինանսները տնտեսելու ձեւ: Երբ փորձեցի պարզել, թե դրամական արտահայտությամբ ինչքան է տարբերվում արտոնությունների չափը փոխհատուցումներից, դժվարությունների հանդիպեցի: Սոցիալական ապահովության նախարարությունում նախ նշեցին, որ արտոնությունների դրամական գնահատման իրական տվյալներ չկան (պատկերացրիք, չէ՞, ինչպես է աշխատում պետական ապարատը): Ապա որպես գաղտնիք նշեցին, թե 2-3 անգամ փոխհատուցումները «էժան» են նստում պետության վրա, քանի որ մի քանի ռիսկի խմբեր զրկվել են նախկին արտոնություններից, եւ ընդհանրապես պետական աջակցությունը նվազեցվել է: Առաջին եւ երկրորդ խմբի հաշմանդամները, մանկուց հաշմանդամ երեխաները, միայնակ չաշխատող կենսաթոշակառուները եւ բոնադասվածները ամենաբարձր փոխհատուցումն են ստանում՝ ամիսը 3300 դրամ: Հիմա պատկերացրեք այն «կարիքավոր-արտոնյալի» վիճակը, որը 3300 դրամով մեկ ամիս պիտի գոյատեւի:

Ընդունարանի այցելու մի ծերունի, որ Արցախում միակ որդուն էր կորցրել, խնդրում էր ցույց տալ այն պաշտոնյային, որն իր ապրելու համար սահմանել է 6000 դրամ (3300 դրամ նպաստ եւ 2700 դրամ կենսաթոշակ): Նա փորձում էր հասկանալ՝ ինչի՞ց ելնելով են այդ գումարը սահմանել: Նախարարության պաշտոնյաներն ի պատասխան ասում էին՝ պետական բյուջեի հնարավորություններից: Իսկ մի՞թե արդարացի է մոտ 1 մլն կարիքավորներին (եթե կարիքավոր համարենք նաեւ կենսաթոշակառուներին) չապրել պարապրելը: Գուցե ավելի բարոյական կլիներ նրանցից մի քանի հարյուր հազար ընչազուրկների համար ինչ թե շատ տանելի պայմաններ ստեղծե՞լը, եւ ոչ թե բոլորին խաբելը:

1998-ի հունվարի 1-ից անցում է կատարվում ընտանեկան նպաստներին (Համաշխարհային բանկի աջակցությամբ): Այժմ կառավարությունը ստեղծել է հանձնաժողով՝ սոցիալական ապահովության առաջին փոխնախարար Գագիկ Եգանյանի գլխավորությամբ, որը պետք է ճշգրտի նպաստի տրամադրման մեխանիզմները:

Կենսաթոշակներ

1996-ի հունվարի 1-ից գործող կենսաթոշակային ապահովության մասին նոր օրենքը փոխեց կենսաթոշակի տրամադրման սկզբունքները: Նախ՝ բարձրացվեց տարիքը: Այս տարի կենսաթոշակի են անցնում 61 տարեկան տղամարդիկ եւ 56 տարեկան կանայք (ըստ օրենքի, հետագայում 65 տարեկան տղամարդիկ եւ 63 տարեկան կանայք): Եվ սա այն դեպքում, երբ հանրապետությունում կյանքի միջին տեւողությունը 69 տարի է:

Մեր հասարակության մեջ բնակչության ծերացման միտում է նկատվում (ծերերի տեսակարար կշիռը տարեցտարի աճում է): Այսօր արդեն 100 աշխատողը մոտ 43 կենսաթոշակառու է պահում: Տնտեսության մեջ զբաղվածների քանակը նվազում է, նվազում է նաեւ կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամին մուծումների չափը: Այստեղից էլ կենսաթոշակների վճարման դժվարությունները եւ դրանց չափերի կրճատման տարվող քաղաքականությունը: Դրան գումարվում է նաեւ վճարողների կողմից հիմնադրամին մուծումներն ուշացնելը կամ պարզապես չկատարելը: Եթե նախկին օրենքով կենսաթոշակները սահմանելիս հաշվի էր առնվում վերջին տարիների աշխատավարձի չափը, ապա նոր օրենքով միայն աշխատանքային ստաժն է կարեւորվում: Ընդ որում՝ յուրաքանչյուր տարվա համար մինչեւ 15 տարվա ստաժի դեպքում 30 դրամ է ավելանում 2200 դրամ բազային թոշակին: Պատկերացնո՞ւմ եք, մեկ տարվա տնաքան աշխատանքը 30 դրամ է գնահատվում: Այսինքն՝ 60 տարի աշխատած ծերունին ստանում է առավելագույն կենսաթոշակ՝ 4675 դրամ: Մի պարզ հաշվարկ կատարենք. եթե միջին աշխատավարձը 10 հազար դրամ է եւ դրանից 34 տոկոս վճարվում է կենսաթոշակային հիմնադրամին, ապա միջին կենսաթոշակը պիտի կազմի մոտ 7700 դրամ (այսօրվա 3100-ի դիմաց): Ո՞ւր է գնում մնացածը, որտե՞ղ է սխալը՝ միջին աշխատավարձի չա՞փն է մեծացված, թե՞ մուծումներ չեն կատարվում: Ի դեպ, կենսաթոշակների անցյալում ընդունված ինդեքսավորում վերջին երկու տարում չի եղել, եւ դրամի կուրսի անկման հետեւանքով կենսաթոշակառուները մոտ 1000 դրամ եկամուտի իրական կորուստ են ունեցել:

Աշխատանք եւ զբաղվածություն

Զբաղվածության կենտրոններում արձանագրված գործազուրկները ստանում են 1800-3000 դրամ նպաստ (կախված այն բանից՝ աշխատանքային կարգապահությա՞ն խախտման համար է ազատվել աշխատանքից, թե՞ սեփական դիմումով):

Ինչ վերաբերում է աշխատանքի եւ զբաղվածության խնդիրներին, սա պետական սոցիալական քաղաքականության ամենախոցելի բնագավառն է: Զբաղվածության մասին 1991-ին ընդունված օրենքը թույլ չէր տալիս վարել ակտիվ քաղաքականություն: 1997-ի հունվարի 1-ից ընդունված նոր օրենքը հնարավորություն է տալիս վարելու ակտիվ քաղաքականություն: Այսինքն՝ զբաղվածության ծառայությունն իրավունք ունի աջակցելու գործազուրկներին՝ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, որի համար նրանց տրամադրվում է անհատույց ֆինանսական միջոցներ (մինչեւ 540 հազար դրամ): Հաշմանդամներին աշխատանքի տեղավորման նպատակով այդ ծառայությունը կարող է ստեղծել մասնագիտացված ձեռնարկություններ եւ արտադրամասեր: Օրենքը հնարավորություն է տալիս նաեւ գործազուրկների վերամասնագիտացում կազմակերպել: Վերամասնագիտացման ճանապարհով լուծվում է եւս մի խնդիր. օտարերկրյա ներդրումների շնորհիվ [illegible] վերակազմվում են որակյալ մասնագետներով: Ուստի նախարարության ազգավարությունը զբաղվածության բնագավառում մեկն է՝ ապահովել բարձր զբաղվածություն կամ որ նույնն է՝ ցածր գործազրկություն: Գործազրկության ցանկալի ցուցանիշը ողջ աշխարհում 5-6 տոկոս է կազմում: Հայաստանում այսօր այն ընդամենը 11 տոկոս է: Բյուջետային ոլորտում աշխատողների համար անհրաժեշտ է ճշտել աշխատանքի տարիքային սահման, որի դեպքում նրանք ժամանակին կթոշակեն իրենց զբաղեցրած պաշտոնը:

Այսօր դեռեւս սույն նախարարությունը զբաղվում է ավելի շատ նպաստներ ու թոշակներ բաշխելով, քան աշխատանքի հիմնահարցերով (հնացած աշխատանքային օրենսդրության մշակում, աշխատատեղերի ստեղծման խթանում, աշխատանքային հարաբերությունների կարգավորում, աշխատողների պաշտպանվածության բարձրացում, ընդհանրապես նրանց շահերի պաշտպանություն եւ այլն): Սակայն այս ամենը մղվել է ետին պլան, իսկ նախարարությունը վերածվել բարեգործական կազմակերպության (այստեղ երբեմն նույնիսկ դրամական օգնություն են տալիս): Զբաղվածության ծառայությունների միջոցով 1996-ին աշխատանքի է տեղավորվել ընդամենը 5000 մարդ: Ամենուրեք շահագործվում է երեխայի աշխատուժը, աշխատավարձի չափերը ցածր են, զանգվածային աղքատիկի ազատումներ են թույլ տրվում, սխալ հարկային քաղաքականությամբ կատեգվում է նոր աշխատատեղերի ստեղծումը, իսկ աշխատավարձից պահումները նպաստում են սվերային գրրծունեության աճին:

Ժամանակին, երբ հիշում եմ, «Հանրապետություն» միավորումը խոստանում էր 400 հազար աշխատատեղ ստեղծել:

Ինչ վերաբերում է փախստականների նկատմամբ տարվող քաղաքականությանը, ութ-ինը տարի է անցել մեր հայրենակիցների Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու օրերից, սակայն մենք շարունակում ենք նրանց փախստական կոչել՝ այդ պիտակը ամրագրելով մինչեւ իրենց կյանքի վերջը: Այո, կան Ադրբեջանից, Աբխազիայից տեղափոխված հայեր, որոնք այսօր չունեն աշխատանք եւ բնակարան: Բայց մենք համառորեն նրանց ներարկում ենք իրենց հողում հյուր, տուժած, փախստական լինելու հոգեբանությունը: Սա, թերեւս, նաեւ քաղաքական պատճառներ ունի:

Նախարարություն

Յոթ տարում սոցիալական ապահովության նախարարությունը երեք նախարար է փոխել (Աշոտ Եսայան, Ռաֆայել Բագոյան, Հրանուշ Հակոբյան), մի քանի անգամ անվանումն է փոխվել, կառուցվածքը, բենը: Յուրաքանչյուր անգամ նախարարությունը մի քանի ամսով կաթվածահար է եղել՝ աշխատողների կրճատումներ, սպասողական վիճակ: Ամենաքաց, ամենաղեմոկրատ եւ դեպի մարդն ուղղված աշխատաոճը նախարարությունն ունեցել է Աշոտ Եսայանի ղեկավարման հինգ տարիների շրջանում: Նախարարի մոտ մնալն այդ ծանր տարիներին (1990-95 թթ.) մաքքելի էր ցանկացած այցելուի: Այդ շրջանում սոցիալական քաղաքականության հիմքն էր դրվում, պետությունը

[illegible]

որ պետնախարարի պաշտոնից նշանակվեց նախարար եւ մոտ 1 տարի աշխատեց: (Նրա ղեկավարած մարդասիրական օգնության հանձնաժողովը սեւ արկղի պես նրա հետ եկավ նախարարություն, նրա հետ գնաց): Ռ. Բագոյանի անունը կապվում է նախարարության՝ Իսահակյանի փողոցի շենքից Տերյան փողոց տեղափոխվելու հետ: Նրա օրոք նախարարությունը փակվեց իր պատերի ներսում (իսկ նախարարն էլ ընկերների հետ՝ իր կաբինետում): Նրան եւս աղարաղը վաս չի հիշում, մանավանդ երանությամբ են պատմում անգործ ու անդարդ այդ օրերի մասին:

Նախկին կոմերիսական գործիչ, իր եռանդով ու աշխատասիրությամբ հայտնի Հրանուշ Հակոբյանի նշանակումը նախարարության տաղմարդկանց խուճապի մատնեց: Կին նախարարի ենթակայությամբ աշխատելն իսկապես էլ, պարզվեց, հեշտ չէ: Երբեւէ սոցապ նախարարն այսքան չսիրված չի եղել աղարաղի եւ նախարարության այցելուների կողմից: Դրան նպաստում է ոչ միայն նախարարի չոր պահվածքը (ասում են՝ դիսպետչերականների ու կոլեգիայի նիստերի ժամանակ նա տաղմարդ-ենթականերին «լավ տեղն է դնում», վերջիններս էլ խոնարհ լռում են), այլեւ՝ փակ դռների ետեւում աշխատելը, յուրաքանչյուր վարչությունում «տանող-բերողներ» պահելը: Սակայն բոլորը միաբերան պնդում են, որ տիկին Հակոբյանն ավելի ընդունակ եւ աշխատասեր նախարար է: Այլ բան, թե արդյունքում ինչ է ստացվում:

Վերջին մեկ տարում նախարարությունը ժրաջանորեն լծվել է փաստաթղթեր՝ որոշումներ, օրենքներ, հրամանագրեր մշակելու աշխատանքին: Ոմանք դա որակում են որպես «բուղք մրոտելու ապարդյուն գործ», ոմանք էլ համարում են, որ վերջապես նախարարությունն իր գործով է զբաղվում: Տեղակալներից մեկը նշեց, որ չնայած ֆինանս չկա, եւ այդ ամենը անիմաստ է, բայց «տիկին Հակոբյանն անհանգիստ կին է. իր համար էլ է զբաղմունք գտնում, ենթակաների համար էլ»: Ընտանիքը, անձնական կյանքը, աշխարհիկ հաճույքները աշխատանքով

ԱԶԳ

Միջազգային

փոխարինած նախարարը աշխատում է (եւ աշխատեցնում օրական 12-13 ժամ՝ շաբաթ-կիրակի օրերն էլ հեսը): Սակայն բյուջետային աշխատավարձ ստացողներին դժվար է պարտադրել այդման աշխատել: Բնականաբար, ամեն ինչ հանգում է ցուցամոլության:

Ինչ վերաբերում է բուն աշխատանքին, տեղերում սոցպի ստեղծած փաստաթղթերով առաջնորդվողները դժգոհ են այդ փաստաթղթերի որակից: Ասում են, որ դրանք լիքն են թերություններով, կազմված են հապճեպ եւ ճշգման կարիք ունեն: Սոցիալական ծառայությունների 49 տարածային կենտրոնները, վերջին կառավարական որոշմամբ, միացվել են զբաղվածության եւ կենսաթոշակային հիմնադրամին եւ գտնվում են մարզպետարանների տնօրինության տակ: Սա, փաստորեն, նախարարությանը զրկել է լծակներից, սակայն զրկել է նաեւ հոգսից: Այս կենտրոններում բազմաթիվ խախտումներ են լինում, եւ դրանց ստուգման համար մոտ երեք ամիս է, ինչ գործում է նախի նախարարության հետ համատեղ կազմված հանձնաժողովը, որը նախարարությունների իրավասությունների մեջ չմտնող առաքելություն է ստանձնել: (Նախարարությունն այցելածս օրերին իրավապահ մարմինները Սոֆիակում մեծ չարաշահումների՝ կենսաթոշակային տարիքի կեղծման փաստեր էին հայտնաբերել):

Ընդհանրապես այս նախարարությունում «փող» աշխատելու մի քանի հնարավորություն կա՝ ծերանոցները, պրոթեզավորման կենտրոնները եւ, ամենակարեւորը, բժշկափորձագիտական հանձնաժողովները, որոնք հաշմանդամության կարգ են որոշում: Տիկին Հակոբյանի նախարարության շրջանում աշխատակազմը փոքր-ինչ թարմացվել է: Նորեկները հիմնականում կանայք են (նախկին կոմերիտական գործիչ, «Շամիրամ» կազմակերպության անդամ եւ այլք): Մեկ շաբաթ առաջ, վարչապետի որոշմամբ, փոխնախարարներից երեքը կրճատվեցին: Շնայած մայիսին կառուցվածքային փոփոխություն էր եղել, բայց, չգիտես ինչու, այս հարցը «բաց» էր մնացել: (Ժամանակին փոխնախարարի պաշտոնն այս նախարարությունում «տրամոլին» (ցասկահարթակ) է հանդիսացել: Այստեղից են «աճել» նախկին քաղաքապետ Աշոտ Միրզոյանը եւ գյուղնախարար Վլադիմիր Մովսիսյանը): Որոշման արդյունքում մնում են սոցպ երկու փոխնախարար՝ առաջին փոխնախարար Գագիկ Եգանյանը (որը չորս նախարար է փոխել, բնագավառը լավ գիտի եւ հետագա առաջընթացի հավակնություններ ունի) եւ մյուս առաջին փոխնախարար Ստեփան Հայրապետյանը (նախկին արհմիութենական գործիչ), որի մտավոր, պրոֆեսիոնալ եւ այլ որակների մասին պարապում ոչ մի լավ բան չես լսի: Երկու փոխնախարարները (արդեն աշխատանքից ազատված)՝ Մասիսի շրջգործկոմի նախկին նախագահ Կարլեն Միքայելյանը եւ մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովից եկած Ա. Կարապետյանը, կարծ են աշխատել, նույնիսկ նախարարությունում ոմանք նրանց չեն ճանաչում: Ինչ վերաբերում է Աշոտ Եսայանին, որը հինգ տարի նախարար է աշխատել, ապա՝ երկու տարի փոխնախարար եւ շատ լավ գիտի սոցպ համակարգն ու պրոբլեմները, աշխատակազմում գտնում են, որ նման վաստակ ունեցող մարդու նկատմամբ դրսեւորված վերաբերմունքը առնվազն անհանդուրժելի է: Իր ազատման մասին վերջին օրն իմացած այս փոխնախարարը նման է թիկունքից դաշույնի հարված ստացածի: Իհարկե, կարելի է մարդուն ազատել աշխատանքից, բայց երիտասարդ, դեռ ասելիք ու անելիք ունեցողին օգտագործած թաշկինակի պես (նույն ձեռագրով) դեն շպրտելը մարդկային չէ՝ համոզված պնդում են շատերը:

ԱՐՄԵՆ ՕՀԱՆՅԱՆ
«Երեւան» տեղեկատվական կենտրոն

ՍՏԱՄԲՈՒԼ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅ ՅԱՆ ՏԱՊԱՆ: Ինչպես եւ սպասվում էր, Հունաստանը խստորեն հակազդել է Թուրքիայի ու Հյուսիսային Կիպրոսի ինքնակոչ թուրքական հանրապետության միջեւ ստորագրված «մասնակի միասնացման» մասին այն համաձայնագրին, որը «հատուկ հարաբերություններ» է հաստատում երկու պետությունների միջեւ վկայակոչելով թուրքական բերքերի հաղորդումները, գրում է Ստամբուլի «Մարմարան»: Թերթը նշում է նաեւ, որ Թուրքիայի արտգործնախարարությունը հրաժարվել էր նախապես փոխվարչապետ Բյուլենթ Էջեւիթի կողմից հայտարարված լրիվ միասնացումից:

Հունաստանի արտգործնախարարությունն օրերս հաղորդագրություն է հրապարակել, որտեղ պնդում է, թե Թուրքիան այդ համաձայնությամբ պաշտոնականացնում է քաղաքական ու ռազմական այն հակակշիռը, որն արդեն տարիներ ի վեր Կիպրոսի թուրքական հատվածում հաստատել է ոչ պաշտոնապես: Նույն գերատեսչությունը հայտարարել է նաեւ, որ Թուրքիան մեկ անգամ եւս իր շահերի համար ոտնահարում է միջազգային իրավունքի նորմերը, վերջին հավաստելով, որ հեռու է իրական ժողովրդավարությունից: Ըստ այդմ էլ Հունաստանը գտնում է, որ Եվրամիությունը շատ ճիշտ որոշում է կայացրել իր շարքերում չընդունելով Թուրքիային:

Հունական ընդդիմության ղեկավարներ, ըստ «Մարմարայի», հայտարարել են, որ Թուրքիան առիթը ձեռքից բաց չի թողնում երկու երկրների միջեւ ճգնաժամային իրավիճակ ստեղծելու համար: Նրանք վարչապետ Սիմիտիսից պահանջել են Թուրքիայի նկատմամբ լինել ավելի ուշադիր եւ շրջահայաց:

Անկողմնակալ միջազգային դիտորդներ հայտնել են, որ Հունաստանի ընդվզումն անակնկալ չէր: Ըստ նրանց, Կիպրոսում «բավականին թվով» հույն, սերբ, ռուս եւ այլ օտարերկրացի վարձկան զինվորներ «պատրաստ սպասում են»:

Թուրքիան զայրացրել է գերտերություններին եւ Եվրամիությանը

Թուրքիայի դիրքորոշումը հարուցել է նաեւ Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կտրուկ հակազդեցությունը: Ռուսաստանի արտգործնախարարությունը հաղորդել է, որ Թուրքիան խախտում է միջազգային կանոնները, իսկ Ֆրանսիայի համանուն գերատեսչությունը նշել է, որ Թուրքիայի եւ Կիպրոսի թուրքական մասի միջեւ համաձայնագիրը հակասում է տարակարծությունները բանակցությունների միջոցով լուծելու ճիգերին: Ֆրանսիան է ողնանկից է, որ Կիպրոսում ստեղծվի դաշնակցային պետություն:

Թուրքական մամուլը նշում է, որ Թուրքիան զայրացրել է նաեւ ԱՄՆ-ի արտգործնախարարությանը, որի խոսնակը հայտարարել է, թե համաձայնագիրը շատ է հեռու կառուցողական լինելուց:

Նույն խնդրի առթիվ բողոքի ձայն է բարձրացրել նաեւ Եվրամիությունը, որի ներկայացուցչի կարծիքով «նման նախաձեռնություններ բարդացնում են խնդրի լուծումը», գրում է «Մարմարան»:

ՇՐՋԱՆ

Ադրբեջանը Ասիայում, Հայաստանն ու Վրաստանը Եվրոպայում

Սոցիալիստական ճամբարի փլուզումից հետո աշխարհի քաղաքական քարտեզը ստիպված է վերանայել «աշխարհագրության այբուբենը», ի հայտ բերելով նորանոր սահմանումներ: Մասնավորապես հայտնի է Կասպից ջրավազանի կարգավիճակի շուրջ բարձրացված աղմուկը, որը բնութագրվում է սոսկ քաղաքական մոտեցմամբ: Մեր տարածաշրջանին վերաբերող մեկ այլ «հայտնություն» արձանագրվել է արդեն մուտքաղաքս Ալբիոնում: «Times» հրատարակչությունը Լոնդոնում լույս է ընծայել աշխարհագրական մի ատլաս, որի տեղեկատու բաժնում Հայաստանը եւ Վրաստանը դասված են Եվրոպա աշխարհամասի, իսկ Ադրբեջանը՝ Ասիայի երկրների շարքում: Այս առումով հետաքրքիր է Ադրբեջանի իրավապատշաճության կենտրոնի տնօրեն Էլդար Զեյնալովի մեկնաբանությունը, որը տարածվել է «Խաբար-սերվիս» գործակալության միջոցով. «Հենց վերջերս Բիշքեկում կայացած միջազգային համաժողովի օրակարգի հարց էր դարձել Եվրոպա աշխարհամասի սահմանների խնդիրը: Ես իմ զեկույցում հատուկ նշեցի, որ հիշյալ խնդիրն այսօր լուծվում է ոչ այնքան աշխարհագրական, որքան քաղաքական եղանակով: Հատկապես նման մոտեցմամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ ներկայումս եվրոպական ընդգրկման մի շարք միջոցառումների աշխատանքներում ներգրավված են ասիական մի շարք երկրներ, մինչեւ Կիրգիզիա: Լոնդոնում հրատարակված աշխարհագրական ատլասը շարունակում է նույն գործընթացը, չգիտես ինչու չարժանանալով մեր հանրապետության համապատասխան գնահատականին»:

Արդեն շուրջ 3–4 տարի է, ինչ նախկին Միջին Ասիա կոչվող տարածաշրջանում հրատարակվող «Կենտրոնական Ասիա»՝ կանայ ուրվագծեր ունեցող տարբեր մասնաբաժինների քարտեզների վրա անպայմանորեն նշվում է նաեւ Ադրբեջանի Հանրապետությունը, ինչը առիթ չի ծառայել որեւէ նման մեկնաբանություն:

ԱԲԻՍ ՂԱՀԻՆՅԱՆ

Թբիլիսի. Զաբա Իոսելիանիի 71-ամյակը բաստում

«Մխեդրիոնի» կազմակերպության առաջնորդները, որոնք ոչ շատ հեռավոր անցյալում էդուարդ Շեւարդնաձեի Վրաստանում երկրորդ հաստատման հիմքն էին, այսօր շարունակում են իրենց կենսագրությունը հանրապետության բանտախցերում: Հուլիսի 21-ին ոչ անհայտ Գիգա Գելաշվիլին հացադուլ է հայտարարել, պահանջելով համապատասխան ստորագրությամբ ազատել Զաբա Իոսելիանիին: Նա գտնում է, որ իր ավագ գործընկերոջ եւ ղեկավարի գործում չկա մեղք հաստատող ոչ մի փաստ: Հացադուլի առիթը Զաբա Իոսելիանիի ծննդյան 71-րդ տարեդարձն է, որը նա նշելու է մենախցում: Նշանակալից այդ իրադարձության կապակցությամբ Գիգա Գելաշվիլին պատվիրելու է հսկայական տորթ՝ մոմով: Ինչպես նշում է «Ռեզոնանս» թերթը, Զաբա Իոսելիանիի հավատարիմ գործընկերը հայտարարել է, որ իր պահանջի անտեսման դեպքում հացադուլին կմիանան այլ սպանդրոնավանները:

Ա. Դ.

ԱՄՆ-ը ՆԱՏՕ-ն ուզում է ձերբակալել Ռադովան Կարաջիչին

11 ՕԳՈՍՏՈՍ, VOA, DW: Ըստ «Վաշինգտոն փոստ» թերթի, ՆԱՏՕ-ի երկրները մտադիր են ձերբակալել բոսնիական սերբերի առաջնորդ Ռադովան Կարաջիչին, եթե նա իսկապես չհրաժարվի քաղաքական գործունեությունից: «Վաշինգտոն փոստում» տպագրված հոդվածի հեղինակը գրում է, որ ՆԱՏՕ-ի ղեկավարությունը դեռ մի քանի ամիս առաջ է մշակել Ռադովան Կարաջիչի ձերբակալման ծրագիրը, եթե նա շարունակի ազդեցություն գործել բոսնիական սերբերի «Սրբսկա Հանրապետության» քաղաքականության վրա: «Վաշինգտոն փոստը» հայտնում է նաեւ, որ ԱՄՆ-ի պետքարտուղարի նախկին օգնական Ռիչարդ Հոլբրուքը եւ Մ. Նահանգների բանագնաց Ռոբերտ Գելբարդը ՆԱՏՕ-ի որոշման մասին տեղեկացրել են Հարավսլավիայի նախագահ Սլոբոդան Միլոշեւիչին: Ըստ ամերիկյան ներկայացուցիչների, որոնք չցանկացան բացահայտել իրենց անունները, ՆԱՏՕ-ի զորամասերը պետք է շրջապատեն գործողության վայրը, իսկ Կարաջիչի ձերբակալությունը պետք է իրագործեն կոմանդոսի խմբերը: Հուլիսի սկզբներին վերոհիշյալ ծրագրի մասին առաջինը «Լոս Անջելես թայմս» թերթն էր հայտնել, հաղորդելով նաեւ, որ ամերիկյան զինվորական հրամանատարությունը դժգոհ է այդ ծրագրից, որի իրագործման դեպքում սերբերը պատասխան գործողությունների կդիմեն միջազգային խաղաղարար ուժերի դեմ: Նախագահ Քլինթոնը շտապում է չեզոքացնել Կարաջիչին, քանի որ ԱՄՆ-ի Սենատը օրերս երկրորդ անգամ հաստատեց, որ հաջորդ տարվա ամռանն ամերիկյան բոլոր զինծառայողները պետք է դուրս բերվեն Բոսնիա Հերցեգովինայից:



ՌԵՅՏԻՆԳ

Նիգերիան գլխավորում է կոռումպացված երկրների ցուցակը

«Թրանսպարենսի ինտերնեշնլ» կազմակերպությունը, որի կենտրոնակայանը գտնվում է Բեռլինում եւ ունի ավելի քան 70 ազգային ներկայացուցչություններ ամբողջ աշխարհում, միջազգային կոռուպցիան սանձահարելու նպատակ հետապնդող ոչ կառավարական միություն է: Նրա տնօրենների շարքերում օրենսդիրներ են, գործարարներ, իրավաբաններ եւ այլն: Օրերս կազմակերպությունը հրապարակել է մոլորակի ամենակոռումպացված 52 երկրների ցուցակը: Այն գլխավորում է Նիգերիան՝ 1,76 միավորով, եզրափակում Դանիան՝ 9,94: Թուրքիան 3,21 միավորով 14-րդ տեղում է: Ինչպես գրում է կիպրական «Սայփրըս Ռիվիլ» շաբաթաթերթը, Կիպրոսի անունը ցուցակում բացակայում է: Միացյալ Նահանգները այս տարի զբաղեցնում է 37-րդ հորիզոնականը: Հետազոտությունը կատարվել է բազմազգ ֆիրմաներում աշխատող բիզնեսմենների շրջանում անցկացված հարցման արդյունքների հիման վրա:

«Մենք կարծում ենք, որ ցուցակի հրապարակումը կօժանդակի մարդկանց գիտակցության մեջ կոռուպցիայի հաղթահարման բնույթի ընկալմանը: Այն ժամանակ, երբ որոշ կառավարություններ մերժում են կաշառակերության ծաղկման վերաբերյալ որեւէ քննադատություն, այլոք լայնածավալ գործունեություն են ծավալում ընդդեմ դրա, նպաստելով իրենց երկրներում առաջընթացին», ասում է «Թրանսպարենսի ինտերնեշնլի» նախագահ Փիթեր Այգենը:

ԱՐ. Ս.

ՀԱՄԱՌՈՏ

Փենյանը հիասթափված է

11 ՕԳՈՍՏՈՍ, VOA: Հյուսիսային Կորեան իր հիասթափությունը հայտնեց 2 Կորեաների միջեւ հաշտության պայմանագիր կնքելու հարցով կայացած նախնական բանակցությունների արդյունքների կապակցությամբ: Փենյանի ներկայացուցիչը հյուսիսկորեական լրատվական գործակալությանը երեկ հայտնեց, որ Նյու Յորքում անցած շաբաթ տեղի ունեցած բանակցությունները չարդարացրին Հյուսիսային Կորեայի սպասումները: Մ. Նահանգների, Չինաստանի, ինչպես նաեւ Հյուսիսային եւ Հարավային Կորեաների ներկայացուցիչներին չհաջողվեց համաձայնության գալ ծրագրված բանակցությունների օրակարգի շուրջ:

ԱՄՆ-ը ընդլայնում է Անգլիայի հյուսիսում գտնվող Պենտագոնի խարսխակայանը

ԼՈՆԴՈՆ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ը ձեռնամուխ է լինում երկրի սահմաններից դուրս Պենտագոնի համընդհանուր տեղեկատվական կայանման եւ արբանյակային հսկման խոշորագույն գագտնի խարսխակայանի աննախադեպ ընդլայնմանը, որը գտնվում է Անգլիայի հյուսիսի Մենվիս կոչվող վայրում: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, Վաշինգտոնը մտադիր է խարսխակայանում կառուցել մի շարք ռազմավարական օբյեկտներ, որոնք նախատեսված են ինֆրակարմիր ճառագայթման միջոցով երկրային օբյեկտներին հետեւող արբանյակային համակարգից հետախուզական տվյալների ստացման համար: Բրիտանացի մասնագետների կարծիքով, ընդունման նոր միջոցները բալիստիկ հրթիռների արձակումներին հետեւող առաջավոր խմբի մի մասն են:

Սակայն խարսխակայանի հնարավորությունների կտրուկ ընդլայնումը Եվրոպայում ընկալվում է որոշակի անվստահությամբ, քանի որ մի շարք եվրոպական աղբյուրների համաձայն, Մենվիսում գտնվող խարսխակայանը «սառը պատերազմի» ավարտից հետո վերածվել է տնտեսական լրտեսության խոշորագույն կենտրոնի:

ԱԶԳ

Մշակույթ

Ուրվագծեր սփյուռքահայ կյանքից

Տաննեսյան ազգանունը քաջածանոթ է ոչ միայն լիբանանահայ գրասեր հասարակությանը, այլեւ սեւտորեն կապակցվում է Բեյրութի «Շիրակ» հրատարակչության հետ:

1952-ին հիմնված այս հրատարակչությունն իր գործունեության բարձրակետին էր հասել, երբ 70-ական թթ. կեսերին դայթեց մեկուկես տասնամյակ տեւած լիբանանյան դատերազմը: Մինչ այդ այստեղ լույս են տեսել սփյուռքահայ եւ հայրենի ականավոր հեղինակների բազմաթիվ երկեր, բարգմանական գրականություն, անգլերեն, ֆրանսերենի փոքրիկ բառարաններ... Հրատարակչությունն անգնահատելի նվեր էր մատուցել սփյուռքահայերին լույս ընծայելով հիմնականում հայրենական երգեր բովանդակող «Շիրակ» երգարանները, որոնք նոյասեցին բուրական երգերը հայկական միջավայրից դուրս մղելուն եւ մեկ անգամ էլ ընդգծեցին հայ երգար լեսի արժեքը:

Անկասկած, հրատարակչական հաջողություններն ավելի նշանակալից կլինեին, եթե դատերազմը մեծ վնասներ չհասցներ այս հաստատությանը եւս: Բազմաթիվ ռմբակոծությունների ժամանակ գույքի հետ հրդեհ դարձան նաեւ հայ հեղինակների արժեքավոր ձեռագրեր, արխիվային նյութեր, գրքեր... Սակայն հրատարակչության սեփականատեր Կարապետ Հաննեսյանը չխնայելով ուժ ու եռանդ, մահառեալ այն վերականգնելու ուղղությամբ միաժամանակ աջակցելով ստեղծագործական աշխատանքով:

«Տարիներու ընթացքին կամաւոր կերպով գրած եմ թերթերու մէջ, դարձեալ սեւին սեւ եւ ճերմակին ճերմակ ըսելու ներքին մղումով մը առաջնորդուելով», ասում է նա:

Կ. Հաննեսյանը հաճախ է հանդես գալիս լիբանանահայ մամուլի էջերում առաջադրելով զաղթօջախի գրական-մշակութային, քաղաքական իրադարձություններին: Երբեւէ գրող կոչվելու հավակնություն չունենալով հանդերձ, նա, ի վերջո տեղի տալով իր հոդվածներ-ընթերցողների առաջարկներին ու խնդրանքներին, կազմեց ու նրանց քննությանը հանձնեց «Անօրեայ դպրկերներ» վերնագրով գիրքը: Այն իր բովանդակությամբ մի փոքր տարբերվում է որեւէ կոնկրետ ժանրով գրված գրական ստեղծագործությունից եւ կազմված է «Արարատ», «Զարթօնք» եւ այլ դարբերականներից քաղված նյութերի հոդվածների հիման վրա: Գրքում տեղ են գտել նաեւ հեղինակի խորհրդածությունները, ճամփորդական նոթերը: Հատորը կազմված է մի քանի բաժիններից, որոնցից ամեն մեկն իր հերթին մի նրբագիծ է ավելացնում ներկայացվող սփյուռքահայ կյանքի ուրվագծերին:

Եթե լիբանանահայը գրքի էջերում հանդիպում է իրեն շրջապատող անորյա դյաչերների ճգրիտ արտացոլմանը, ապա գաղթօջախ երբեւէ ոտք չդրած ընթերցողի առջեւ ծավալվում է նրա կյանքի ուրախություններն ու անհաջողությունները ներկայացնող մի համայնապատկեր: Սփյուռքահայ գաղութի շուրջ ստեղծված միրաժն ասիճանաբար համալրվում է ռեալիստ «նկարչի» ներկապնակից առված իրական գույներով: Իրենց երկրորդ հայրենիքը օտար ափերում գտած հայերի կատաղերեր վրա: Պատերազմն անկումային եղավ նաեւ գաղթօջախի գրական-մշակութային կյանքի համար: Կարդալով նրա արհավիրքների մասին, ակամայից զգաւեռներ ես անցկացնում վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցած դեպքերի միջեւ, եւ մի ժողովրդի ողբերգությունը վերածվում է համամարդկայինի:

Հայերը սկզբունքայնորեն չմասնակցեցին Լիբանանում մոլեգնող քաղաքացիական պատերազմին, սակայն ինքնաաջատչական-նոյասակներով կազմեցին կամավորական ջոկատներ, որոնք որոշ զոհերի գնով պահպանեցին տեղի հայության անվտանգությունը: Մաքուր ու հոգնեցուցիչ էր այդ դայքարը: Եվ քանի որ խաղաղ կյանքը բոլոր ժամանակներում եղել է մարդկային գլխավոր երազանքը, ուրեմն հեղինակի բարձրաձայն աղոթքն ամ Աստված հնչում է բոլորի տրերից. «Հայր մեր կասկած չունիմ, թէ հասկացողութիւն ցոյց կու տաս մեր տառապանքներուն նկատմամբ, բայց ապրելով կը խնդրեմ ու խնդրելով կ աղաչեմ, որ վերջ տաս այս անտանելի վիճակին, ալ յոգնած են ջիղերս, շորցած են հաւատքի ակունքներս ու կը մնայ միայն լոյսի նշոյլը, որ Դուն ես»: Գրքի մյուս բաժինները եւս մանրամասն դատկերներ են ներկայացնում երջաղատող աշխարհից, եւ Կ. Հաննեսյանը միաժամանակ նկատելով իր հայրենակիցների մաքր ու մեծ բերությունները, չի մոռանում անդրադառնալ իր ժողովրդի դիտողություններով ու մտորումներով: Նա նկարագրում է գաղթօջախի հայերին հատուկ սովորություններ, դրանց երբեմն անհեթեթ կողմերը չզլանալով լավ խորհրդատուի դաշտնում: Ամենուր զգացվում է գրքասեր մարդու հոգատարությունը հանդեպ մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը, հանդեպ մատաղ սերնդի հայեցի դաստիարակությունը:

Հատկապես սուր քննադատության են արժանանում նրանք, ովքեր ընկած նյութական արժեքների հետեւից համակված միայն հարստություն դիզելու, օտարների սովորույթները, վարքուբարքը ընդօրինակելու մոլուցքով, անտեսում են հոգեւոր արժեքները եւ մոռանում արմատների մասին, որոնցից սերում են: Հաննեսյանի համար, ակայն, կյանքի կարեւոր սկզբունք է օտար միջավայրում հայ մնալը, ծառայելը գաղթօջախի ու հայրենիքի հոգեւոր կյանքին: Այդ է վկայում նրա գրքի բովանդակությունն ամբողջությամբ, իսկ մեզ միայն մնում է հաջողություններ մաղթել Կ. Հաննեսյանին եւ իր գործունեությունը շարունակող նրա «Շիրակ» հրատարակչությանը, որի երկրորդ ճյուղն արդեն մեկուկես տասնամյակ գործում է նաեւ Լոս Անջելեսում, նրա եղբոր Հովհաննես Հաննեսյանի ղեկավարությամբ:

ՆԱԻՐԱ ՆԱՂԱՐՅԱՆ

Ամերիկաբնակ քուրքերը Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետարանից պահանջում են չքայլայտել հայերին ցեղասպանության հուշարձան կանգնեցնել

ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ, 12 ՕԳՈՍՏՈՍ. ՆՈՅՅՈՐՔ ՏԱՅՄՍ. Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետարանի որոշմամբ քաղաքի ամենաբարձր բլրի վրա տեղադրված խաչը պետք է հանձնվի տեղի հայկական կազմակերպություններին, որոնք էլ մատաղիր են այն դարձնել Հայոց ցեղասպանության հուշարձան: Քաղաքապետարանը թույլատրել է տարվա մեջ միայն երկու անգամ լուսավորել հուշարձանը, ինչից ելնելով հայերը հայտնել են, թե դա կլինի ապրիլի 24-ին եւ 25-ին՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության:

Հաղորդելով այս մասին, քուրքական «Միլիեթ» թերթն ավելացնում է, թե Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետարանը չի անսացել ամերիկաբնակ քուրքերի բողոքներին, որոնք դժգոհել են, որ հուշարձանը դառնալու է «վիճելի նյութի» խորհրդանիշ:

Սակայն քուրքերը շարունակում են բողոքել քաղաքապետարանի որոշման դեմ: Նրանք, ըստ «Միլիեթի», «ճակատամարտում դարտվել են, սակայն դատերազմը շարունակվում է»: Քուրքական կազմակերպությունները Ինտերնետի իրենց բաժանորդներին կոչ են անում բողոքի նամակներով հեղեղել քաղաքապետարանը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՆՑՈՒՂԱՐՁ

Թավեները Չիլինգիրյան քառյակի կատարմամբ

Ջոն Թավեներ (ծնվել է 1944 թ.) Անգլիայի առաջատար կոմպոզիտորներից է, գործիքային, ինչպես նաեւ կրոնական բովանդակությամբ բազմաթիվ երգչախմբային ստեղծագործությունների հեղինակ: Նա հայտնի է նաեւ երեւանցի ունկնդիրներին: 1995 թ. սեպտեմբերին թավջութակի եւ լարային նվագախմբի համար նրա գրած Eternal Memory ստեղծագործությամբ բացվեց «Աշնանային սերենադ» միջազգային երաժշտական փառատոնը: Այն կատարում էին բրիտանացի դիրիժոր թավջութակահար Սթիվեն Իսեռլիսը եւ Երեւանի «Սերենադ» կամերային նվագախումբը էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ: Մեկ օր հետո Կամերային երաժշտության տանն իր մենահամերգի ընթացքում Իսեռլիսը կրկին կատարեց Թավեներ ստեղծագործություններից մեկը՝ թավջութակի համար գրված Threnos երկը, այն նմանեցնելով հուղարկավորման աղոթքի: Նյութի առումով մերձավոր երկու ստեղծագործությունները (դրանցում օգտագործված է ուղղափառ հունական մոնոդիա) իրենցից ներկայացնում են հանդարտ ծավալվող երաժշտական ընթացքով հորինվածքներ: Թավեներ բնորոշ խոհականությունը դառնում է երաժշտության ազատ չափման մեջ ներթափանցելու եղանակ:

Ներկայումս եվրոպական երկրներում հանրահայտ դարձած Սթիվեն Իսեռլիսը Ջոն Թավեներ մոտիկ ընկերն է: Միաժամանակ նա Լեւոն Չիլինգիրյանի լարային Չիլինգիրյան քառյակի առաջին ջութակահարի բարեկամն է: Այդ հիանալի կոլեկտիվի արվեստը մենք կարողացանք գնահատել 1992 թ. Երեւանյան հյուրախաղերի ժամանակ (ինքս այդ մասին գրել եմ «Ազգում» հոկտեմբերի 9-ին): Ինչ վերաբերում է Իսեռլիսի եւ Չիլինգիրյանի ստեղծագործական համագործակցությանը, տվյալ փաստը եւս մեր տեսադաշտում էր, երբ 10 տարի առաջ Լեւոն Չիլինգիրյանը եւ Սթիվեն Իսեռլիսը Ա. Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում որոշեց մենակատարներ հանդես եկան Բրամսի Ջութակի, թավջութակի եւ սիմֆոնիկ նվագախմբի կրկնակի կոնցերտով (Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժորական վահանակի մոտ էր Վահագն Պատյանը):

Անգլիացի եւ հայ երաժիշտների բարեկամությունն ու գործակցությունը շարունակվում են: Ցավոք, մենք մշտապես տեղեկություններ չենք ստանում այդ կարգի երաժշտական իրադարձությունների մասին: Ուստի յուրաքանչյուր նոր լուր մեզ համար առանձնահատուկ կարեւորություն է ստանում: Վերջերս ես հետաքրքրությամբ կարդացի հուլիսին անցկացվող Լոնդոնի քաղաքային երաժշտական փառատոնում Չիլինգիրյան քառյակի կատարմամբ Ջոն Թավեներ նոր՝ երրորդ լարային կվարտետի պրեմիերայի մասին: Ընթերցողներին առաջարկում ենք քաղվածք Դեյվիդ Մյուրեյի «Հին Բեռնսթայնը, նոր Թավեներ» գրախոսությունից, որը հրատարակվել է Լոնդոնի «Ֆայնենշլ թայմս» թերթի հուլիսյան համարներից մեկում:

«Լոնդոնյան փառատոնը հինգշաբթի օրը շարունակեց Չիլինգիրյան քառյակը: Դրանց ծրագիրը՝ Արվո Պյարտի եւ Ջոն Թավեներ հանգստացնող, բայց ոգեշունչ երաժշտությունը, ունկնդիրներին մատուցվում էր առավելագույն բարենպաստ պայմաններում, սուրբ Բարդուղիմեոս Մեծի ջերմացած, ակուստիկայի առումով փառահեղ հինավուրց եկեղեցում:

Գլխավոր ստեղծագործությունը Թավեներ նոր՝ Թիվ երեք Dhiodia կվարտետն էր: Այն մեկ մասանի է, տեւում է կես ժամից զգալիորեն ավելի եւ պարունակում բազմաթիվ կարճ բաժիններ: Հեղինակը դանդաղ տեմպով ոգեղեն բաժինները բնութագրել է «հանդիսավոր եւ փայլուն», «անխոով, հավերժական» եւ «երկյուղած» մակդիրներով: Դրանք կրկնվում էին: Իսկ արագ տեմպով մի քանի բաժինները, որոնք կրում են «գրոտեսկային եւ ընչաքաղց», «փքուն», «ռամկական» հեղինակային նշումները, չէին կրկնվում: Ինչպես միշտ, Թավեներ երաժշտությունը որոշ ունկնդիրների համար հուզիչ եւ խրատական էր, մինչդեռ մյուսներն ասես բարեպաշտության կիրի մեջ լինեին»:

ԱՎԵՏԻՍԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«Հանդեսի» նոր համարը

ՀԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսը», որի հիմնադրման քառասնամյակը լրանում է մյուս տարի, վիրախարի դեր է կատարել հայագիտության զարգացման ասպարեզում: Այն վաղուց ձեռք է բերել միջազգային նշանակություն, որի էջերում հանդես են գալիս ոչ միայն հայ, այլեւ օտարազգի հայագետներն ու արեւելագետները, ակադեմիկոսներ ու հնագետները եւ այլ գիտաճյուղերի ներկայացուցիչները: Այդ է վկայում նաեւ նրա հերթական համարը, որը լույս է տեսել օրերս:

Համարը բացվում է աշխարհահռչակ ասդաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի հիշատակին նվիրված գնահատանքի խոսքերով, որոնց հեղինակներն են ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը եւ նշանավոր ասդաֆիզիկոս, ակադեմիկոս Գ. Սահակյանը:

«Հանդեսում» զգալի տեղ են զբաղեցնում «Հոդվածներ» եւ «Հաղորդումներ» բաժինները, որոնցում տպագրված են արեւմտահայության կոտրածների եւ Հայկական հարցին նվիրված ակադեմիկոս Մ. Ներսիսյանի, գիտ. դոկտոր Ս. Համբարյանի եւ Արթուր Պեյլերյանի (Փարիզ) նոր ուսումնասիրությունները: Այստեղ տպագրված ակադեմիկոս Հ. Ավետիսյանի հոդվածը նվիրված է հայազգի գեներալ Հակոբ Բագրատունու (1879-1943) կյանքին ու գործունեությանը, իսկ ակադեմիկոս Ս. Աբրահամյանը հանդես է եկել «Արդի հայերենի զարգացման մի քանի խնդիրների մասին» հրատապ հոդվածով: Ջիվանու 150-ամյակին է նվիրված աշուղագետ Շ. Գրիգորյանի նոր ուսումնասիրությունը, իսկ եղիշե Չարենցի 100-ամյակի առթիվ նոր վերլուծություններ է կատարել գրականագետ Ա. Եղիազարյանը:

Ակադեմիկոսներ Գ. Սարգսյանի, Ս. Արեւշատյանի, Վ. Նալբանդյանի, Ժան Պիեռ Մահեի (Փարիզ) հոդվածները նվիրված են Մովսես Խորենացու, եգնիկ Կողբացու, եղիշեի, Ագաթանգեղոսի երկերի այլեւայլ կողմերի նորովի մեկնաբանություններին: Հայագիտական կարեւոր նշանակություն ունեցող հիմնահարցեր են քննարկվել նաեւ ակադեմիկոս Վ. Հարությունյանի, գիտությունների դոկտորներ Ա. Խաչատրյանի եւ այլոց նոր նյութերում:

Հարուստ են նաեւ «Քննարկումներ», «Հրապարակումներ», «Գրախոսություններ», «Գիտական ինֆորմացիա» բաժինները, որոնց տակ տպագրված մեկ տասնյակից ավելի նյութերն ամբողջությամբ նվիրված են հայագիտության զանազան հիմնահարցերին: «Մեր հոբելյարները» բաժնում նշված են ակադեմիկոսներ-փիլիսոփա Գեւորգ Բրուտյանի, գրականագետ Հրանտ Թամրազյանի, գեղանկարիչ Գրիգոր Խանջյանի 70 եւ պատմաբան Բաբկեն Առաքելյանի 85-ամյակները, «Լրատու» բաժնում նշվել է նաեւ ռումինացի մեծանուն հայագետ ու արեւելագետ, ՀԳԱԱ արտասահմանյան անդամ էդմոնդ Շյուցի ծննդյան 80-ամյակը, որի առթիվ հոբելյարի մասնակցությամբ վերջերս տեղի է ունեցել գիտաժողով:

«Պատմաբանասիրական հանդեսի» հերթական համարը ոչ բաժանորդները կարող են ձեռք բերել մայրաքաղաքի գրախանութներից:

Վ. ՄԱՂԱԼՅԱՆ,
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՈԲԵԼՅԱՐԻ ԱՆԿՅՈՒՆ

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Չեմպիոնի անտրամաբանելի խաղը

Երեկ կայացան ֆուտբոլի Հայաստանի 6-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի 3-րդ տուրի հանդիպումները: Հանդիսատեսը մեծ հետաքրքրություն էր առաջացրել «Հրազդան» մարզադաշտում կայացած «Փյունիկ»-«Շիրակ» մրցամարտը: Վերջին շրջանում Երևանի առաջատար թիմերի և հանրապետության հյուսիսային մայրաքաղաքի Գյումրիի թիվ 1 ակումբի մրցամարտերը դերբիի բնույթ են ստացել: Այնպես որ, բաց եւ գեղեցիկ ֆուտբոլի ականատես լինելու սպասումները լիովին բնական էին: Սակայն հույսերը գրեթե չարդարացան: Խաղը մի տեսակ իներտ ստացվեց: Ասածս հիմնավորելու նպատակով նշեմ, որ 90 րոպեների ընթացքում ֆուտբոլիստները միայն մեկ 100 տոկոսանոց գոլային դրսևորում ստեղծեցին, որը կարող էր ճակատագրական լինել երկրի լավագույն թիմի համար: 51-րդ րոպեին գյումրեցի Հարություն Վարդանյանը կենտրոնից գեղեցիկ խաբսերով ճեղքեց «Փյունիկի» դաշտպանությունը եւ հայտնվեց հարվածային դիրքում: Թվում էր, ուժեղ հարվածի դեպքում դարդասպահ Կարեն Բաբայանը հազիվ թե կարողանա փրկել դուրությունը: Մեկ ակնթարթ անց գնդակը սուրաց դեպի դարպասը: Բայց այս անգամ նախախնամությունը - երեւանցիներին ներկայացավ դարդասապահի տեսքով:

«Փյունիկը» դաստիարակում էր հակագրոհներով, որոնք մեծամասամբ ավարտվում էին մրցակցի տուգանային հրապարակում առաջացած անհեղի իրարանցմամբ: Այս անգամ էլ չեմպիոնի հարվածային ուժը կազմում էին Արսեն եւ Վարազդատ Ավետիսյանները, Համլետ Մխիթարյանը, Սեյրան Պողոսյանը եւ փոխարինման դուրս եկած (Ա. Ավետիսյանի տեղը) Արմեն Շահգելդյանը: Սակայն այս խաղում ֆուտբոլիստները գրեթե ոչնչով աչքի չընկան: Կարծես թե ինչ-որ անտարբերություն կար «Փյունիկի» գործողություններում, դակասում էր նպատակասլացությունը: Ի՞նչն էր դատճառը: Գուցե ֆուտբոլիստների տրամադրության վրա ազդել է 4 խաղընկերների հեռացումը թիմից: Եվ վերջապես, առավել մտահոգության տեղիք տվող մի հարց, որը կարծում եմ, հուզում է ֆուտբոլասերներին, կկարողանա՞ն տղաները վերագտնել վստահությունը օգոստոսի 20-ին Լիսաբոնում կայանալիք Պորտուգալիայի հավաքականի հետ աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի խաղից առաջ: Չէ՞որ նրանցից շատերը խաղում են նաեւ ազգային հավաքականում: Իսկ այս խաղը նրանք ամենքին էլ լավագույնս պետք է ապացուցեն, թեեւ նրանք էլ հաջողության չհասան 0-0:

«Փյունիկ»-«Շիրակ» 0-0
12 օգոստոսի. Երեւան. «Հրազդան» մարզադաշտ:
Մրցավար՝ Գեւորգ Հովհաննիսյան (Երեւան):

«Էրեբունի» ՀՄՄ-«Ցեմենս» 1-2 (1-0)
12 օգոստոսի. Երեւան. «Էրեբունի» մարզադաշտ:
Մրցավար՝ Հակոբ Ներսիսյան (Երեւան):
1-0 Սեւադա Արզումանյան (3)
1-1 Գառնիկ Ղեւոնդյան (85)
1-2 Շիրակ Սարիկյան (90)

«Լոռի»-«Ղարաբաղ» 0-1 (0-1)
12 օգոստոսի. Վանաձոր. «Լոռի» մարզադաշտ:
Մրցավար՝ Արմեն Մանուչարյան (Կապան):
0-1 Մհեր Հովհաննիսյան (45)

Մրցաշարային աղյուսակը 3-րդ տուրից հետո

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	3	2	1	0	6-1	7
2. Արարատ	2	1	1	0	3-1	4
3. Էրեբունի ՀՄՄ	3	1	1	1	5-4	4
4. Ցեմենս	3	1	1	1	2-3	4
5. Երեւան	1	1	0	0	3-0	3
6. Ղարաբաղ	2	1	0	1	2-3	3
7. Շիրակ	3	0	3	0	1-1	3
8. Կոտայք	2	0	1	1	2-5	1
9. Լոռի	3	0	0	3	0-6	0
10. Դվին	0	0	0	0	0-0	0

ՏՐԱՅԻ ԼԱՎԱՐՅԱՆ

Գոռբելաարը եւ նրա ընկերները արդարացվեցին
Վինչեստերի բազավորական դատարանը, որ զբաղվում էր այսպես կոչված «Գոռբելաարի գործով» ֆուտբոլային հանդիպումների առուծախի կասկածյալների հանցանքը: Այսպիսով, չկարողացավ ապացուցել կասկածյալների հանցանքը: Այսպիսով «Գոռբելաարի եւ ընկերության» գործը կարելի է փակված համարել

ԼՈՒՐԵՐ

Ավարտվեց նաեւ լեռնային «Տուր դե Ֆրանսը»

Ռուսաստանցի Պավել Շերկասովը 5-րդ տեղը գրավեց կիրակի օրը ավարտված «Տուր դե Ֆրանս» լեռնային բազմօրյա հեծանվավազքում: Ընդհանուր հաշվարկում հաղթեց դանիացի Լինի Կրիստենսենը: Վերջին փուլը շահեց ֆրանսիացի Կրիստոֆ Դյուպուին:

Դանիացիները գերազանցում են մրցակիցներին

Ջրադահուկի միջազգային մրցումներում առաջին արդյունքն առայժմ պատկանում է Դանիայի մարզիկներին: Նրանք գլխավորում են եզրափակիչ փուլի մրցաշարային աղյուսակը, որի կազմում են նաեւ Սլովակիայի, Ֆինլանդիայի, Նորվեգիայի, Իտալիայի եւ Գերմանիայի դասվիրակները:

Հինգ նոր հայտ աշխարհի առաջնությունում

Եւս հինգ երկրներ՝ Ռուսաստանը, Հարավսլավիան, Նորվեգիան, Վրաստանը, Մոնղոլիան, հաստատեցին իրենց մասնակցությունը Երեւանում անցկացվելիք աշխարհի մինչեւ 16 եւ 18 տարեկան դասանիների ու աղջիկների շախմատի առաջնությանը: Մրցաշարի կազմկոմիտեին անվանական դաշտնական հայտեր են ներկայացրել արդեն 48 դեսություններ:

Գ. Հ.

Սավառնելով ամդերում

Էքստրեմալ մարզաձեւերն աստիճանաբար մեծ հեղինակություն են նվաճում եւ արդեն կանոնավոր մրցումներ են անցկացվում: Դրանցից վերջինը ռեկորդային թվով մասնակիցներ հավաքեց տարբեր երկրներից: Այս մարզիկներն իրենց ավելի վստահ են զգում երկնքում: Թրիսթալ մրցաձեւից հետո առաջատարներն ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի թիմերն են:

Ամեն ինչ դեսք է ժամանակին անել

Ճապոնացի հայտնի բենիսիստ Մացուոկին հրավիրած մամուլի ասուլիսում հայտարարեց արհեստավարժ սպորտից հեռանալու մասին: Մացուոկին ընդամենը 30 տարեկան է, սակայն այն կարծիքին է, որ մեծ մրցասպարեզը դետք է թողնել ժամանակին: Չնայած դիտարժանությանը, բենիսը ծանր մարզաձեւ է՝ կապված ստրեսների եւ նյարդային զգոնության հետ: Սիա թե ինչու վերջին ժամանակահատվածում շատ աստղեր դիրքերը զիջեցին երիտասարդներին եւ գնացին վաստակած հանգստի:

ԹԱՆՐԱՄԱՐՏ

Եվրոդական երկու ռեկորդ Հայաստանի առաջնությունում

Օգոստոսի 6-9-ը Սեւան քաղաքում անցկացվեց ծանրամարտի Հայաստանի դասանեկան առաջնություն 1981-83 թթ. ծնված մարզիկների միջեւ: Առաջնությունում գրանցվեց եվրոդական երկու ռեկորդ: 46 կգ քաշային կարգում գյումրեցի Տիգրան Մարտիրոսյանը երկամարտի արդյունքով՝ 175 կգ (77,5+97,5) գերազանցեց եվրոդայի դասանեկան բարձրագույն նվաճումը: Նման արդյունքի հասավ նաեւ նրա համախաղահացի Ռաֆիկ Պետրոսյանը (70 կգ), որի դոկում վարժությունում՝ գրանցած 127,5 կգ արդյունքը եւս եվրոդայի դասանեկան ռեկորդ է: Առաջնության ընթացքում երեք ծանրոդներ առաջին անգամ լրացրեցին սպորտի վարդեսի չափանիշը: Մարզական բարձր կոչման արժանացան գյումրեցի Մակար Թամրազյանը (54 կգ) եւ էջմիածնցի Գեւորգ Ալեքսանյանը (54 կգ): Ի դեդ, այս մարզիկները նույն հերթականությամբ բարձրացան դասվո դասվանդանի համադասախանաբար 1-ին եւ 2-րդ աստիճաններին: 64 կգ քաշային կարգում հանդես եկող մեկ այլ գյումրեցի՝ Կարապետ Երանոսյանը եւս առաջին անգամ լրացրեց սպորտի վարդեսի նորմն: Մյուս քաշային կարգերում հաղթողներ դարձան Վարդգես Աբելյանը (38 կգ, գ. Սամադար), Արթուր Դանիելյանը (42 կգ, գ. Բաղրամյան), Արմեն Ղազարյանը (50 կգ, Սոդիտակ), Գեւորգ Դավթյանը (59 կգ, Գյումրի), Գեղամ Աբոյանը (76 կգ, Վեդի), Ալեքսան Գասպարյանը (83 կգ, Գյումրի) եւ վերջին քաշային կարգից ծանր մարզիկների դայքարում հաղթեց Գագիկ Սողոմոնյանը (Վեդի):

Թիմային դայքարում առաջին տեղը գրավեց Գյումրիի հավաքականը: 2-րդ հորիզոնականում հանգրվանեց Վեդիի մասնագիտացված մարզադարանի թիմը, իսկ 3-րդ տեղը գրավեց Սամադարի մարզադարանի թիմը:

Այս մասին տեղեկացանք սպորտվարչության լրատվական ծառայությունից: Ավելացնենք, որ մրցասպարեզ էին դուրս եկել 8 մարզերի 130-ից ավելի ծանրոդներ: Նրանց թիվը կարող էր ավելի շատ լինել ֆինանսի առկայության դեդքում: Մրցաշարի ավարտից հետո ծանրամարտի ֆեդերացիայի քարտուղար, միջազգային կարգի մրցավար Հենրիկ Գրիգորյանը հայտնել է, որ այժմ մարզիկները ուսումնամարզական հավաք կանցկացնեն Ծաղկաձորի օլիմպիական մարզաբազայում՝ նախադատրաստվելով օգոստոսի վերջին Հունգարիայի Թաքաբանիա քաղաքում մեկնարկող ծանրամարտի եվրոդայի դասանեկան առաջնությանը: Նույն աղբյուրը նշել է նաեւ, որ հայ մարզիկները հնարավորություն ունեն տուն վերադառնալու մրցանակներով:

Ցտեսություն Աթենք, ողջո՞ւյն Մելիլիա

Ողջույն 6 տղաներ

Աթենքում ավարտված թեթեւ ատլետիկայի աշխարհի առաջնության վերջին ակորդը դարձավ կանանց 4x400 մ փոխանցումավազքը: Մինչեւ վերջին փուլն առաջատարը Ռուսաստանի հավաքականն էր, սակայն արդյունքում ռուս աղջիկները մնացին առանց դարգեւի, իսկ լավագույն արդյունքը ցույց տվեց Գերմանիայի հավաքականը: Արծաթե մեդալը նվաճեցին ամերիկուհիները, իսկ բրոնզե դարգեւին արժանացան Ճամայկայի նրբագեղ աղջիկները:

Այսդիսով, թեթեւատլետները հրաժեշտ տվեցին հին էլլադային, բայց արդեն վաղն Իսդանիայի Մելիլիա քաղաքում կմեկնարկի ջրային մարզաձեւերի եվրոդայի առաջնությունը: Երկնագույն մրցասդարեզ դուրս կգան հին աշխարհի բոլոր ուժեղագույն մարզիկները:

«Մեքենան» խափանվեց, իսկ «ինքնաթիռը» բարեհաջող վայրէջք կատարեց

Ամերիկյան Մեյսոն քաղաքի արագ կորտերում ավարտված «Մերսեդես սուդեր-9» շարքի մրցաշարի (2,3 մլն դոլար մրցանակային հիմնադրամով) հաղթող դարձավ աշխարհի թիվ 1 ռակետ Փիթ Սամփրասը, որը նվաճեց այս տարի իր 5-րդ տիտղոսը: Քառորդ եզրափակիչում ամերիկացին առավելության հասավ ռուսաստանցի Եվգենի Կաֆելնիկովի նկատմամբ: Իսկ 26-ամյակի նախօրյակին Սամփրասը մեծահոգի չգտնվեց իսդանացի Ալբերտ Կոստայի դեմ կիսաեզրափակիչ մրցամարտում: Իսդանացու հետ մոլորակի լավագույն բենիսիստը հարցերը լուծեց նույնքան արագ, ինչդես մինչ այդ՝ Կաֆելնիկովի: Սամփրասը հաղթեց 6-3, 6-4 հաշվով: Կոստայի խոստովանությամբ, երբ Փիթը լավ մարզավիճակում է, նրան դիմակայելը նույնն է, ինչ՝ ձեռքով փորձել գցել ռեակտիվ ինքնաթիռը: Ինչեւէ, «ինքնաթիռը» բարեհաջող անցավ նաեւ Մուստերի արգելքը: Ավստրիացին եզրափակիչում դարտություն կրեց 3-6, 4-6 հաշվով:

Մրցաշրջանում երկրորդ դարտությունը կրեց աշխարհի կանանց թիվ 1 ռակետ, շվեյցարուհի Մարտինա Հինգիսը: Մանհեթեն Բիչում մրցաշարի կիսաեզրափակիչում նա դարտվեց տանտիրուհի Լինդսեյ Դեւենփորթին երեք սեթերում: Խաղից հետո երջանիկ հաղթողը շնորհավորանքներ էր ընդունում, իսկ Հինգիսը՝ փիլիսոփայում. «Ես մեքենա չեմ, այլ նորմալ մարդ: Թեեւ ձգտում եմ հաղթել միշտ եւ ամենուրեք, բայց երբեմն ուժերս սդառվում են, ինչդես մեքենայինը»: Հավանաբար, Դեւենփորթը եւս ուժասդառ էր եղել, քանի որ եզրափակիչում զիջեց Մոնիկա Սելեշին (7-5, 5-7, 4-6): Իսկ Քոնեթիքութ նահանգում անցկացվում է «Պայլեթս դենս» շարքի հերթական մրցաշարը: Առաջին շրջանը հաջող հաղթահարեցին Վիդանը, Մեդվեդեւը եւ Խաբարովսը: Առաջինն առավելության հասավ Պայիսի նկատմամբ:

Օրվա հետքով

ԱԴՐԲԵՋԱՆ

Էլչիբեյին հանդիպելը հանցանք է

Ադրբեջանի մամուլի եւ զանգվածային լրատվության այլ միջոցների համակարգում գրաքննությունն այսօր շարունակում է մնալ որպես կողմնորոշող եւ թելադրող թիվ մեկ գործոն: Հանրապետության հեղինակավոր «Մոնիտոր» ամսագրի գլխավոր խմբագիր Էլդար Հուսեյնովը Գուդաուրիում կայացած համաժողովի աշխատանքների ընթացքում անձամբ վկայեց նման մարմնի գոյության եւ կարեւորության մասին: Միեւնույն ժամանակ Եվրահամայնքի անդամ լինելու ձգտումով դայմանավորված, Ադրբեջանի ղեկավարությունը միշտ էլ փորձել է հողարկել դրա գոյությունը, դուրս չբերելով միջազգային ասպարեզ: Այնուամենայնիվ, օրերս գրանցված միջադեպը վկայեց հանրապետությունում «խոսքի ազատության» խնդրի հետ առնչվող գործերի անմխիթար վիճակի մասին...

Հուլիսի վերջին ամերիկյան «Լրագրողների դաշտպանության կոմիտե» կազմակերպության տնօրեն Ուիլյամ Օրմի ստորագրությամբ Ադրբեջանի իրավապաշտպան կենտրոնը ստացել է բողոքարկող մի նամակ, որի դասնենը ուղարկվել է նաեւ հանրապետության նախագահին: Նամակի առիթը ԱՄՆ քաղաքացի «Uncaptive Minds» ամսագրի խմբագիր, «Ի նպաստ Արեւելյան Եվրոդայի ժողովրդավարության» ինստիտուտի տնօրեն Իրեն Լասոտայի անօրինական խուզարկումն էր եւ հարցաքննությունը: Տիկին Լասոտային հետեւել են հուլիսի 12-ից, երբ նա Նախիջեւանի Քելեթի գյուղում հանդիպում եւ հարցազրույց է ունենում Ադրբեջանի նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի հետ: Բաքու վերադառնալուն դես, Իրեն Լասոտային կանգնեցնում են մի քանի զինվորական, փորձելով դարզել նրա նախիջեւանյան առաքելության նպատակը: Ակնկալվող դասախոսանը ստանալով, զինվորները նրան ուղեկցում են առանձին մի սենյակ, որտեղ եւ սկսում են խուզարկությունը, համաղասախան ձայնագրություններ եւ տեսաժապավեններ հայտնաբերելու նպատակով: Անհաջող խուզարկումից հետո տեսուչը տիկին Լասոտային խոսք է տալիս «գտնել մարդկանց, որոնք եւ կվոխանցեն տեսաժապավենները»: Միայն նման խոստումից հետո հիշյալ «հանցագործը» ազատ է արձակվում: Պարոն Ուիլյամ Օրմը իր նամակում հատուկ ընդգծում է, որ «սա առաջին դեպքը չէ, երբ Աբուլֆազ Էլչիբեյի հետ հանդիպած լրագրողները եւ այլ անձիք աղօրինի կերպով խուզարկվում են եւ տուգանվում»:

ԱԲԻՍ ՂԱԶԻՆՅԱՆ

Հորդառատ անձրեւները կազմալուծել են Թուրքիայի կամուրջը

ԱՆԿԱՐԱ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Տարվա ներկայիս շրջանի համար հազվադեպ հորդառատ անձրեւները, որոնք կազմալուծել են Թուրքիայի մի շարք շրջանների կամուրջը, առ այսօր արդեն 13 մարդու կյանք են խլել: Ուր մարդ կայծակնահար է եղել, երեքը ջրախեղդ, եւ կրկին մահացել են ճանապարհային վթարներից, որոնց դաշտնությունները եղել է անընդհատ եղանակը:

[illegible] ՏԱՍՍ-ը, հորդառատ տեղումներից, որոնք որոշ տեղերում հասել են 220 մմ, ամենից շատ տուժել է Բուֆորի ափերին փռված 13-միլիոնանոց Սամսունը: Գրեթե երկու օր շարունակվող տեղատարափի հետեւանքով գերքաղաքի 300-ից ավելի տներ են հեղեղվել, որոշ փողոցներ վերածվել են անձրեւագետերի: Անցած երեկոյան հեղեղվել են քիմիական նյութերի արտադրության երկու ֆաբրիկա: Մինչեւ այսօր առավոտ այդ ձեռնարկությունների 112 բանվորից հայտնվել էր փրկել 80-ին: Մնացածներին «ջրի գերությունից» ազատելու աշխատանքներ շարունակվում են:

Երբ Սամսունը հայտնվել է ջրի տարերքի իշխանության ներքո, աղտաՄիջերկրականի ծովեզերքին գտնվող Մարմարիս առողջավայրը շրջանցող է լինում անտառային հրդեհ: Այդվել է ավելի քան 150 հեկտար տոմս անտառ: Հրդեհը տարածվում է սաստիկ քամու հետեւանքով: Այն մարելու համար գործի են դրված հրշեջ ինքնաթիռներ եւ ուղղաթիռներ:

Օդերեւութաբանների տվյալներով, Թուրքիան անընդհատ եղանակի իշխանության տակ կգտնվի մինչեւ հինգշաբթի-ուրբաթ:

Ադրբեջանը դահանջում է ՆԱՏՕ-ի տարբերակված մոտեցում

ԲԱԿՈՒ, 12 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՓՐԱՅՍ ՆՅՈՒՍ-ԷՍ ՓՐ ԷՅ: Անդրկովկասի պետությունների նկատմամբ ՆԱՏՕ-ի մոտեցումը պետք է տարբերակված լինի, այսօր երկօրյա դաշտնական այցով Ադրբեջանում գտնվող Հյուսիսատլանտյան դաշինքի զինվորական կոմիտեի փոխնախագահ Նիկոլաս Քեհոուի հետ կայացած հանդիպման ժամանակ հայտարարել է արտգործնախարար Հասան Հասանովը: Ադրբեջանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը դա բացատրում է նրանով, որ «Հայաստանի տարածքում ռուսական ռազմահանգրվան է տեղաբաշխված, իսկ ահա Ադրբեջանը ազատ է օտարերկրյա ռազմահանգրվանների առկայությունից»: Քեհոուն նշել է, որ «Կովկասը հետաքրքրություն է ներկայացնում ՆԱՏՕ-ի համար, որը ձգտում է կայունացնել կացությունը տարածաշրջանում»:

Նորաբաց «Բրաբիոն Ունի (ունիվերսալ) Սերվիսում»

կա այն ամենը, ինչ Բրաբիոնի մյուս սրահներում, ինչպես նաեւ արհեստական ծաղիկներ եւ թփեր, հոտավետ եւ գունավոր մոմեր, արհեստական մրգեր, հատապտուղներ, զամբյուղներ, փաթեթավորման թղթեր եւ ժապավեններ, մի խոսքով այն ամենը, ինչ անհրաժեշտ է Ձեր ճաշակով, Ձեր ձեռքերով Ձեր բնակարաններն ու աշխատասենյակները ձեւավորելու համար:

Հասցեն՝ Իսահակյան-16, «Երիտասարդական» մետրոյի մոտ

ՍՈՒՆ

UNDP Office in Armenia is seeking qualified candidates for a shortterm position of a civil engineer for monitoring of Yerevan Zvartnotz Air Cargo Terminal construction under EBRD loan in the framework of a UNDP project ARM/96/005 "Zvartnotz Aircargo Terminal Monitoring". The candidates should have excellent knowledge of civil construction standards and norms, be able to provide qualified opinion on compliance of construction with non-military use norms and regulations. Fluency in English is an asset. The incumbent will be required to perform his/her duties for a total 21 working days during the months of August-October 1997.

Qualified candidates should submit their CVs to UNDP Office in Yerevan (19 Karl Liebknecht str., 3rd Floor) not later than 18 August 1997, 18:00. For more information, please call 566073/583194.

«Վան-1» ՓԲԸ-ն

մաքշելի գներով առաջարկում է միջպատային սալիկներ (պլիտա, պեմզաբլոկ) եւ ասիծաններ:

Տեղափոխումը՝ ընկերության միջոցներով, կանխիկ եւ փոխանցումով:

Հասցեն՝ Արցախի 75 (ՋԷԿ-1 մոտակայքում):

Հեռ. 63-17-57 եւ 47-00-06:

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 5 րդ հարկում, 70/50 քմ, ավտոնստակով: Հրաչյա Քոչար 23 (նախկին Չեկի խանութի մոտ):

Հեռախոս՝ 22-42-68

Բաց հասարակության ինստիտուտի Արեւելք-արեւելք ծրագիրը

հայտարարում է մրցույթ մասնակցելու
«Զանգվածային լրատվության միջոցներ եւ խաղաղության ինքնաճանաչման իրավունքը»
թեմայով սեմինարի

Սեմինարի նպատակն է քննարկել հարաբերությունները լրագրողների, հասարակական կարծիքի եւ դաշտոնական ներկայացուցիչների միջեւ: Սեմինարի հիմնական թեմաներն են.

- Ի՞նչ է մամուլի ազատությունը:
- Ի՞նչ է հասարակական շահը: Որտեղ է ավարտվում հասարակական շահը եւ որտեղ է սկսվում անձնականը:
- Պե՞տք է արդյոք վերանայել Մամուլի մասին օրենքը, թե՞ անհրաժեշտ է սահմանել լրագրողների կողմից:

Սեմինարի հյուրերն են լրագրողներ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոդայից, Միացյալ Նահանգներից: Կանցկացվեն հանդիպումներ դաշտլամենտի, կառավարող կոալիցիայի, ընդդիմության, հասարակական կազմակերպությունների, խաղաղարարական հասարակության ներկայացուցիչների եւ իրավաբանների հետ:

Ծրագիրը կազմակերպվել է Ռումինիայի բաց հասարակության Սորոսի հիմնադրամի, Ռումինիայի անկախ թերթի եւ Լրագրողների մասնագիտական ասոցիացիայի կողմից: Սեմինարը տեղի կունենա օգոստոսի 28–31-ը, Ռումինիայում:

Դիմումներն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 5-ը:
Անհրաժեշտ է ներկայացնել.

- ինքնակենսագրություն
- երաշխավորագիր
- հիմնավորում, թե նշված միջոցառումը որքանով կնպաստի մասնակցի հետագա գործունեությանը

Ավելի մանրամասն տեղեկությունների համար դիմել Հայաստանի Բաց հասարակության ինստիտուտ հետեւյալ հասցեով.
Այգեձորի 53ա
հեռ. 272119, 271713

CEMA
CENTRE DE MANAGEMENT D'ARMENIE

Հայաստանի Հանրապետության Սոցիալական դալատը եւ ֆրանսիական ԺԻԱ ընկերությունը համատեղ ստեղծել են Հայաստանի մենեջմենտի կենտրոն ՍԵՄԱ, որը գործում է 1991 թ. Կենտրոնի նպատակն է վարչական կոմերցիոն եւ ֆինանսական ոլորտների համար կադրերի վերադասրաստումը մենեջմենթի, առեւտրի եւ ֆինանսական կառավարման արդի տեխնոլոգիաներին համադասախան: ՍԵՄԱ կենտրոնը կազմակերպում է 1997-98 թթ. ուսումնական տարվա ընդունելություն: Ուսումնառությունը բաղկացած կլինի 10 փուլերից, յուրաքանչյուրը ամիսը մեկ անգամ մեկ շաբաթ տեւողությամբ, մեկ տարի կտրվածքով:

Դասավանդան ծրագիրը

- *Շուկայական տնտեսություն*
- *Հաշվապահություն*
- *Շեռնարկությունների իրավունքը*
- *Շեռնարկության կազմակերպումը եւ արտադրության մեթոդները անալիտիկ կառավարում*
- *Բանկ եւ ձեռնարկություններ*
- *Վաճառք եւ բաշխում*
- *Մարկետինգ*
- *Մենեջմենտ եւ մարդկային ռեսուրսներ*
- *Միջազգային առեւտուր, ներմուծում եւ արտահանում, ֆինանսական գործառնություններ*
- *Բիզնես պլան*

Ունկնդիրները կարող են հաճախել փուլերից ցանկացածն ըստ ընտրության, ինչպես նաեւ բոլոր փուլերը հաջորդաբար: Դասընթացները անցկացնում են ֆրանսիացի փորձառու մասնագետները սինխրոն թարգմանությամբ: Դասընթացի մասնակիցներին կտրվի համադասախան վկայական: ՍԵՄԱ կենտրոնը Ձեզ տեղեկացնում է, որ ուսումնական տարվա վերջում դասախոսությունների ողջ փուլին մասնակցած ունկնդիրներից լավագույններին հնարավորություն կընձեռվի առաջադրվելու տարբեր ձեռնարկություններում, ինչպես նաեւ օտարերկրյա ֆիրմաներում աշխատանքի անցնելու համար:

Տեղեկությունների համար զանգահարել 56.51.94 հեռախոսով:
Հասցեն՝ Հանրապետության 39
ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատ

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ ☎ 529353

հաճախակ.	մակս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 Կվտ	2.5 Կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 Կվտ	3.0 Կվտ	6.1 ժ	

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ – Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների մասին (առաջարկ, պահանջարկ) հեռախոսով: 589167, 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատճառ 640. Տպաքանակը 3000. Ստորագրված է տպագրության 12.08.1997. Գինը 100 դրամ